



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

7749

ՀԱՅ ՏԵՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱԿԵԱՆԻ ԿՈՆՍԱԿՐՈՎՈՒԹԵԱՆ. № 4.

Ա օ ց ի ա լ ի ս տ ա կ ա ն ։ Գ ր ս գ ա ր ա ն ։

## ԱՎ ԻՆՉՈՎՔ Ե ԱՊՐՈՒՄ.

ՍԻՄՈՆ ԴԻԿԱՏԱՑՆԻ.

ՅԱՄՊԴ մահութիւն,

Գ. ԲԱՐԵ 75 սահմախում.

1891.

ՀԱՅԱԿԵԱՆ ԱԶԱՏ ՏՊԱՐԱՆ.

ԼՕՆԴՈՆ.

33  
Դ-48

H APM.  
2-4822

33

7-48

Հրատարակութիւն Հնչակեան Յ. Կուսակցութեան. № 4

Սօցիալիստական գրադրան

ԱՎ ԻՆ ԶՈՎ Ե ԱՊ ՌՈՒՄ

840

Սիմոն Դիեմէյն

Թարգմանութիւն



Հայկական ազատ տպարան

ԼՕՆԴՐԵՆ

20.10

## ԱՐԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ.

Ներկայումս հայութիւնն անցնում է մէկ այնպիսի  
պատմական բոպէ, որ մեծ նշանակութիւն ունի նրա ա-  
պագայի համար: Այս որոշում է այդ առագանու Հայ-  
կական իրականութիւնն առաջացրել է մի շարք հասա-  
րակական խնդիրներ, որոնք նոյն իսկ իրերի ընթացքի  
ընորհով իրանց լուծումը գտնում են հայ ժողովրդի  
հանրակացութեան րոնի կերպարանափոխութեան, յեզա-  
փոխութեան մէջ: Յեղափոխել ներկայ հանրակացութիւ-  
նը և հայութեան առաջադիմութեան ու զարդացման հա-  
մար հաստատել նոր նպատակայարմար հասարակական  
կազմակերպութիւն, այնպիսի մի կազմակերպութիւն, որ  
ազատ միջոցներ պահպան հասարակական աշխատու-  
թեան համար, որը այսոր է պատրաստէ հայութեան  
վերջնական ազատումն յաղթանակը — այս է ընդհանուր  
խօսքով այն մեծ խնդիրը, որ դիմութեան դիմաց  
նոյն իր կեանքը: Այդ խնդիրը միաժամանակ վերաբե-  
րում է ամբողջ հայութեան և շշափում նրա հասա-  
րակական բոլոր յարաբերութիւնները: Կա վերաբերում

45038-uh,



29333-63

2001

է ամբողջ հայութեան և ոչ լոկ նրա մի մասին, որովհետեւ այն պայմանները, որ հիմնապատճառ են այդ ինդիքի ծագման, յատուկ են ամբողջ հայութեան Եւ շափում է նա Հայութեան բոլոր հասարակական յարաբերութիւնները, որովհետեւ ինքն արդիւնք է այդ յարաբերութիւնների, որոնց լուծումն էլ միւս կողմից կառող է տալ միակ ինքը. Այդ մեծ խնդիրը գրկում է ամբողջ հայութեան ամբողջ կեանքն իր բոլոր ճիւղերում — հաւաբական, տնաեսական, քաղաքական, ընտանեկան ու մասնաւոր Եւ դրանումն է նրա մեծ նշանակութիւնը՝ իրեւ պատմական մի մեծ երկոյթ, որ յայտնվում է լուծող Հայութեան ներկայ հասարակական խնդիրների՝ մի կողմից և միւս կողմից՝ նրա ապագայի որոշող Սրանից կարելի է եղաբակացնել, թէ ինչ լուրջ քննութեան ու լուսաբանութեան պէտք է ենթարկվէ այդ մեծ խնդիրն իր հիմնապատճառներով, իր էութեամբ ու իմաստով Եւ այդ հիմնապատճառների այդ էութեան ու իմաստի զիտակցութիւնը մշակելուց յետոյ միայն հայ յեղափոխականը կարող կը լինի ունենալ այն սիսի գործունեութիւն, որ համապատասխան ու նպաստաւոր լինի այդ մեծ խնդիրի լուծման, այնպիսի լուծման, որպիսին գծագրում է նոյն այդ խնդիրի իմաստը.

Մեր այդ ասածներից ըստ ինքեան առաջանում է այն հետեւութիւնը, թէ պէտք է զինուսարմել մարդկութեան պատմութեան ճշմարիտ հասկացողութեամբ և ճիշդ, գիտական հայեացքներով առհասարակ ընդհանուր մարդկութեան իրականութեան վրայ, Դա նշանակում է՝ իւրացնել մէկ ամբողջ ամիսին աշխարհահայեցքի սիստէմ. Եւ այդ զէնքով և միմիայն այդ զէնքով պէտք է փոխադրվել Հայութեան հողի վրայ, քննել ու լուսաբա-

նել նրա իրականութիւնը, որովհել նրա ներկայ հասարակական յարաբերութիւնների կերպերն ու իմաստը և նրանց ընական ընթացքն ու զարգացումը, և այդպիսով ժողովրդի ազատման ու բարօրութեան տեսակէտից գծագրել հասարակական անհրաժեշտ աշխատութիւնը:

Նպաստել այդ աշխատութեան — հայ ճշմարիտ առաջադիմ, սոցիալիստական մասովի ու գրականութեան պարտականութիւնն է, Եւս առաւել գա է նրա զերը, որը լուսնի կառարելու համար պէտք է Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Լյոգեսի վարդապետութիւնն աւելի ու աւելի տարածէ Հայերիս մէջ, թարգմանելով Հայերէնի թէ՛ այդ նշանաւոր գիտնականների խնդիրոն և թէ՛ նըրանց հետեւողների գրուածքները Մեր կարծիքով գրանով մէկ անփոխալ ինելի ծառայութիւն կը մատուցի՛ Հայ յեղափոխական զործին մասնաւորապէս և Հայ մըտքի առաջ մշակման ու զարգացման ընդհանրապէս. Առանց կատարելապէս ըմբռնելու այդ մեծ առողջիչների գլխաւոր սկզբունքների ամբողջ խոր իմաստն ու նշանակութիւնը չէ կարելի ունենալ ճիշդ ու զիտական հասկուցողութիւն մարդկութեան պատմութեան ու իրականութեան մասին — այնպէս, որպիսի մեկնաբանութիւն առաջիս է պատմութեանն ու իրականութեանը զիտութեան ամենամեջին խորը. Հասարակական զիտութիւնը Կարլ Մարքսի հանձարին է պարտական իր այդ վերջին խոռքով, որ այսօր՝ զնալով աւելի ու աւելի ստում և քաղաքացիական իրաւունքի իր գիւտերով Մարքսը զիտական սոցիալիզմի այդ ստեղծողն ու հայրը, այնպիսի մեծ յեղափոխութիւն է առաջացրել հասարակական զիտութիւնների այլ և այլ ճիւղերում, որ նրա անունը, խօսելով նրա հետեւողներից մէկի ոճով ժամանակով ու կը լի-

նի Նիւտօնի ու Դարվինի անունների շարքում<sup>11</sup>՝ Ունենալով գիտական ահազին պաշար և օժտված կրիտիկական հազեազիւտ տաղանդով՝ Մարքսը մարդկութեան պատմութեան տվեց մի բոլորովին նոր գիտական մեկ նարանութիւն, ասացուցանելով մարդկային զանազան գասակարգերի, կլասների մէջ (classe) միշտ տիրապետող կոփւը, թշնամութիւնը, անտագօնիզմը (antagonisme) միմեանց գէմ։ Միւս կողմից նա անուղղ կրիտիկայի, քննութեան ենթարկեց ներկայ բուրդուազական հանրակացութեան վերջին, որին էլ իր վարդապետութեամբ տվեց առաջին ու վերջնական գիտական հարուածը։ Մ'ծ ուսուցչի սկզբունքները յեղափոխական են իրանց էութեամբ մարդկային ներկայ հանրակացութեան վերաբերութեամբ, որի անխուսափելի բայցայումն ու կործանումը գիտականօրէն ասացուցանում է նա, հիմնվելով իրականութեան, իրերի բնական ընթացքի վրայ։ Նրա սկզբունքները կազմում են հիմքը մարդկային մի նոր հանրակացութեան, որ ճակատագրական կերպով՝ կիրականանայ ապագայում, որպէս նաև կազմում են հիմքը մի նոր աշխարհահայեացքի, որ հիմնովին տարբերվում է բոլոր միացած աշխարհահայեացքներից։ Ենորհով նրա սկզբունքների՝ սօցիալիզմը դադարեց լինել ու տօտիա (utopie), հաստատվեցաւ գիտական հիմնաքնների վրայ, սօցիալիստական շարժումը ստացաւ լուրջ ու նախատիայարմար կերպարանք և այնպիսի մեծ ծաւալ, որից այսօր աշխարհի մեծերն էլ երկիւղ են կրում — և ոչ զուր — բաւական չէ այդ. պարզորոշ սիստէման ու լուրջ եղանակով գծագրվեցաւ բանող ընդհանրութնան և դրա հետ միասին ընդհանուր մարդկութեան վերջնական աղատման ուղին:

Ըստ ինքեան հասկանալի ու բնական է, որ մեզ հայ սօցիալիստներիս վրայ է ընկել այդ հանճարեղ մասածող յեղափոխականի վարդապետութեան տարածումը հայերիս մէջ։ Կերկայ գլուխով մենք նախաձեռնում ենք մի շարք թարգմանութիւնների հրատարակման, որոնցից նշանակում ենք այստեղ մի քանիսների անունները։

« Կօմունական կուսակցութեան Մանիֆէստը . » — Հեղ. Կ. Արքս և Ֆ. Էնդելս.

« Գիտական սօցիալիզմի վարդացումը . » — Հեղ. Ֆ. Էնդելս.

« Վարձու աշխատանքը և կապիտալը . » — Հեղ. Կ. Մարքս:

« Սօցիալիստական կազմակերպութիւնը . » — Հեղ. Ա. Բերելը

« Իրաւունք ծուլանալու . » — Հեղ. Պոլ Լաֆարդ։

« Բանւորների գրութիւնն Անզիմայում . » — Հեղ. Ֆ. Էնդելս։

« Ի՞նչ են ուղում սօցիալ գեմօկրատները . » — Հեղ. Ժիւլ Գէդ և Պոլ Լաֆարդ։ և այն, և այն։ \*)

Գրանց հետ միասին գործ կը գնենք մեր բոլոր ջանքատարկելու համար մի շարք բրոցիւրներ, որոնց գլուխով կը մնի Մարքսի հասարակական ու տնտեսական գլուխոր թէօրիաների սլարդ մեկնաբանութիւնները։

\*) Կ. Մարքսի զլմաւոր հեղինակութիւններն են, Կապիտալ».

« Փիլիսոփայութեան Ազքատութիւնը — պատասխան Պրուգոնի Ազքատութեան Փիլիսոփայութիւնը գրուած քին։ »

« 18 Բրիւմերը կոփ նապօլէօնի ».

Ներկայ բրոցիւրի հեղինակն է Սիմօն Դիկչտէյն, մի լեհացի տաղանդաւոր երիտասարդ, որ այժմ կենդանի չէ: Պարզ լեզով և բազմաթիւ օրինակներով ու լուսաբանութեամբ, յատկացված բանւորների ընթերցանութեան համար, հեղինակն իր այդ գրուածքում գլխաւորապէս ներկայացնում է Կ. Մարքսի քաղաքատնունութեան մէջ արած գիւտերից ամենանշանաւորը, յաւելեալ արժեքը, որ միանգամայն որոշումէ կտակի տալի և աշխատանքի մէջ եղած յարաբերութիւնը: Այսինքն զիտականօրէն ապացուցանումէ, թէ ներկայ հասարական կազմակերպութեան, ներկայ կապիտալական արդիւնաբերութեան շրջանում որպիսի եղանակով է կապիտալիսաը շահագործ (exploiter) բանւոր գասակարգին: Դրանով Կ. Մարքսը ցոյց տվից, թէ ինչպէս կապիտալն ու կապիտալիսաը գոյութիւն ունեն բանւորից խլած յաւելեալ աշխատանքի գնով ի վնաս նոյն իրան բանւորին, իր այդ գիւտով Մարքսը ցոյց արվեց կապիտալիստ զասակարգի պարագիտի մը (օտարակեր լինելը) և կապիտալի գոյացման աղբեւը: Այդ մեծ գիւտը մատնանից է անում կապիտալիստ գասակարգի ու կապիտալական արդիւնաբերութեան կենսական երակի վրայ: Այդ գիւտի մէջ է կապիտալական արդիւնաբերութեան դէմ գիտութեան անողոք ու արդար զատավճիռը:

Այդ գիւտի հետ միատեղ հարկ ենք համարում հէնց այստեղ ծանօթացնել մեր ընթերցողներին Մարքսի մէկ ուրիշ մեծ գիւտի հետ ևս, այն է՝ նրա հայեացը համաշխարհային պատմութեան վրայ, որ և առաջ ենք բերում այստեղ, թարգմանելով մի կտոր նրա աշխատակից գիտական ֆի. Լնգելովի մի գրուածքից:

Կարլ Մարքսը, — ասում է Լնգելով, — գիտութիւն ների պատմութեան մէջ արձանագրեց իր անունը բազմաթիւ նշանաւոր գիւտերով, որոնցից մենք մատնանիշ կանենք երկու ամենաազլիսաւորների վրայ: \*

Յա յեղաջրում գործեց համաշխարհային պատմութեան վրայ եղած հայեացըում: Նախկին հայեացքների հիմնական համոզումն այն էր, թէ պատմական բոլոր փոփոխութիւնների պատճառը պէտք է որոնել մարդկանց փոփոխուղղ գաղափարներում, իսկ պատմական բոլոր փոփոխութիւններում տիրապետող ամենազլիսաւորները համարում էին քաղաքական փոփոխութիւնները: Բայց ո՞րտեղից են ծագում գաղափարները մարդկանց մէջ, և որո՞նք են այն պատճառները, որ գրգում են գէպի քաղաքական փոփոխութիւնները, — այդ հարցերը մինչեւ իսկ դրված էլ չէին: Միայն քրանսիտական նորագոյն և մասամբ անզիլիսական պատմական չկոլաները (գալրացները) հանգեցան այն համոզման, թէ եւրօպական պատմութեան դրդող, վարող ոյժը, զննէ սկսած միջին գարերից, եղել է այն կախը, որ տիրում էր ծագողու զարգացող բուրժուազիի և աւտատեկան աղնուականութեան մէջ հասարակական ու քաղաքական ամբափառութեան համար: Իսկ Մարքսը հաստատեց, թէ մարդկութեան ամբողջ պատմութիւնը կլասների (զասակարգերի) կուների

\* ) Գրանցից մէկը յաւելեալ արժեքն է, որ արդէն ներկայ բրօշիւրի նիւթն է կազմում և ուրիմն աւելորդ ենք համարում այստեղ առաջ բերել նաև Լնգելով գըր ուածքի այդ երկրորդ մասը:

պատմութիւն է, թէ քաղաքական կռւի ամեն տեսակ խճճված կերպերում հարցը կայանում էր միայն այս կամ այն կլասի հասարակական ու քաղաքական տիրապետութեան մէջ, այսինքն արդէն գոյութիւն ունեցած ու իր զերը կատարած կլասը զգնում էր իշխանութիւնը պահել իր ձեռքը, իսկ նոր եղեան եկողը ձգտում էր իր ձեռքը գցել այդ իշխանութիւնը:

Բայց ի՞նչն է պատճառը հասարակութեան այլ և այլ կլասների ստեղծման ու պահպանման: Միշտ լոկ նիւթական (matériel), այն ամենակոպիտ նիւթական պայման նեղը, որոնց տիրապետած ժամանակը պատմուկան յայտնի հասարակութիւնն արդիւնաբերում ու փոխանակում է իր գործածութեան համար յատկացված արդիւնքները: Այսպէս, միջնադարեան աւատականների տիրապետութիւնը յենված էր զիւղական մանր համայնքների ունտեսութեան վրայ, որն ինքն էր արդիւնաբերում իր գործածութեան համար բոլոր անհրաժեշտ առարկաները և զը րեթէ ըստ փոխանակութիւն: Պատահաղմող ազնը աւատականների ու կապում նրանց ազգային կամ գէթ քաղաքական միութեան կապով իսկ երբ ծագեցան քաղաքները և զրանց հետ միասին արհեստաւորական առանձնացած արդիւնաբերութիւնը, այդ ժամանակ երեան եկաւ նախ ներքին և ապա միջազգային առևտուր և դրանից զարգացաւ քաղաքական գրանցային միջին դասակարգը (բուրժուազիան), որը իր և ազնւականութեան մէջ եղած կռւով զեռ միջն դարերում նշանակութիւն էր ստացել աւատական հիմնարկութիւնների մէջ, ըստ որում վայելում էր յայտնի իրաւունքներ, իրեւ մէկ առանձին դասակարգութիւնը, Յետք իր ձեռքը գցում հասարակական հարստութիւններն ու զօրութիւնը, թէև տակաւին երկար ժամանակ զուրկ էր քաղաքական իշխանութիւնից, որ մնացել էր ազնւականների ու զրանց վրայ յենվով թագուարների ձեռքում կանունում էր այսպիսի սիայում, օրինակ, Մեծ Յեղափախութիւնից յետոյ — Բուրժուազիան աստիճանի գործառնութիւնների համար բուրժուազիան առանձնահատութիւնը և իր հերթին՝ զարձաւ տիրապետող կլաս՝ պրոլետարիատիքի ու զիւղազնների վերաբերութեամբ:

Չիմնելով այդ տեսակէտի վրայ և բաւականաշափ գերբորդ դարու մէջերքում, բուրժուազիաի համար բաց վեցաւ առևտարական ընդարձակ վաճառանոց և դրա հետ միասին ստացաւ նոր զարկ ինպաստ իր արդիւնաբերութեան զարգացման Արհեստաւորական արդիւնաբերութեան գլխաւոր ճիւղերը յետ հրվեցան զործարանական մանու փակտուրայով իսկ սա էլ յետ հրվեցաւ անցեալ դարում տեղի ունեցած չոգեմենքենայի զիւտիչնորհով խոշոր արդիւնաբերութեամբ, որն այլ և սնարանոր էր զարձել, այս վերջինս առևտրի վրայ ազդեց նրանով, որ յետ տամնայ երկիրներում յետ հրեց հին արհեստաւորական արդիւնաբերութիւնը, իսկ զարգացած ինդուստրիա ունեցող երկիրներում ստեղծեց հազորգակցութեան նոր միջնուներ — չոգենաւեր, երկաթուղիներ, էլեքտրական հեռու զիրներ: Այդպիսիով բուրժուազիան տեղի ու աւելի էր իր ձեռքը գցում հասարակական հարստութիւններն ու զօրութիւնը, թէև տակաւին երկար ժամանակ զուրկ էր քաղաքական իշխանութիւնից, որ մնացել էր ազնւականների ու զրանց վրայ յենվով թագուարների ձեռքում կանունում էր այսպիսի սիայում, օրինակ, Մեծ Յեղափախութիւնից յետոյ — Բուրժուազիան աստիճանի գործառնութիւնների համար բուրժուազիան առանձնահատութիւնը և իր հերթին՝ զարձաւ տիրապետող կլաս՝ պրոլետարիատիքի ու զիւղազնների վերաբերութեամբ:

Հիմնելով այդ տեսակէտի վրայ և բաւականաշափ

\* ) Պրոլէտարիատ կաշվում է այն կլասը, որ չունի ոչ չողութեանիքի զործիքներ, ոչ կապիտալ և որ հարկադրված է ծախել իր բանով պյուր, վարձֆլել սեփականարկութիւնների մօտ, որպէս զի ըստ մեռէ անօթութիւնից:

շծանօթ լինելով՝ հասարակութեան խրաբանչիւր յայտնի ըջոնի տնտեսական զրութեան հետ — ինչի վրայ ուշա դրութիւն չեն գարձնում մեր մասնագէտ պատմաբանները, — կատարելապէս հասկանալի են դառնում պատմա կան րոլոր տեղի ունեցած փոփոխութիւնները։ Պատմա կան յայտնի շրջանի՝ զազափարներուն հաւատքը նոյնպէս ամենապարզ կերպով բացատրվում են տնտեսական, կեն սական հանգամանքներով և նոյն շրջանի հասարակական ու քաղաքական յարաբերութիւններով, որմնք էլ իրենց կող մից պայմանաւորվում են նոյն տնտեսական հանգամանքներով։ Շնորհով միայն այդ հայեացքի պատմութիւնն առաջին անգամ գրիեցաւ իր իսկական հիմքի վրայ։ Այդպիսի կատարելապէս ակնյացանի, մինչեւ այժմ ամրողովին արչա մարհված մի փառու ոսկայն թէ մարդիկ ամենից առաջ պէտք է ուտեն, խմեն, հագնելին, թէ, հետեւ արար, նրանք պէտք է աշխատեն, նախ քան կարող կը լինեն կուել իշխանութեան համար, պարտպել քաղաքականութեամբ, կրօնքով փիլիսոփայութեամբ — այդ զիւրը մրանելի փաստը միայն հիմա է ստացել քաղաքացիական իրաւունք պատ մութեան մէջ։

Այօցիալիստական հայեացքների համար վերին աստի ձանի կարեսը էր պատմութեան այդ նոր հասկացողութիւնը։ Այժմ հաստատված է, որ մարդկութեան ամրող նախնթաց պատմութիւնը տեղի է ունեցել կլասների ան տագօնիզմի ու կուի մէջ որ միշտ եղել են տիրապետող ու ստորագրեալ շահագործող ու շահագործված կլասներ, և որ մարդկութեան աշազին մեծամանութեանը միշտ վիճակված է եղել խիստ աշխատանքի ու ուղրմելի գոյութեան բաժինը։ Բայց ինչո՞ւ այդպէս։ Պարզապէս այն պատճառով որ զարգացման րոլոր նախընթաց շրջաննե

րում՝ արգիւնաբերութիւնը գեռ այնչափ տկար էր, որ պատմութեան յետագայ ընթացքը կարող էր կատարվել միայն այդ հակառակութիւնների գոյութեամբ, պատմա կան ամրող պրօցէսին, իր ամրողջութեան մէջ գործակ ցել է միայն մի սակաւաթիւ առանձնաշնորհված փորբա մասնութիւն, մինչդեռ մարդկութեան մեծամանութիւնը դատապարտված էր լոր իր գոյութեան համար ձեռք բերել ազքատիկ միջոցներ և շարունակ շատացնել առանձ նաշնորհված փորբամասնութեան չ սրբաւթիւնները։

Պատմութեան այգալիսի հասկացողութիւնը, այդպէս ընական ու պարզ կերպով բացատրող կլասային տիրա պետաւթեան ծագումը, — որ տարբեր է նախընթաց հա յեացքներից, որմնք մարդկանց անհաւասարութեան պատ ճառը վերագրում էին միայն մարդկանց շար կամքին, — թիրում է նաև մինչեւ այն համոզման, թէ շնորհով հսկա յական ծաւալի, որին ներկայումս հասել են արդինա բերող ոյժերը, չքանում է և վերջին պատրուակը, զոնէ առաջադէմ երկիրներում, մարդերի բաժանման տիրապե տողների ու ստորագրեալների, շահագործողների ու շա հագործվածների վրայ։ Այժմ անկնյայտնի է գարձել որ տիրապետող խոչըր բուրժուազիան արդէն խաղացել է իր գերը, որ նա ոչ միայն այլ ևս ընդունակ չէ հասարակա կան զեկավարութեան համար, այլ որ նա յայտնվում է խոչնոտ արդինաբերութեան յետագայ զարգացման հա մար, որպէս գա հաստատում են առեւտրական կրիզիսները (ճգնաժամ), մանաւանդ վերջին (1877 թ. \*), և ամեն երկիրների ինդուստրիաի ճնշված դրութիւնը։ Պատ

\* Ֆ. Էնգելսի այն յօդուածը գրված է 1878 թ.  
Ֆ. Խ.

մական յետագայ զեկավարութիւնն անցել է այժմ դէպի պրօլէտարիատը. դէպի մի կլաս, որը կարող է ազատվել հէնց այն պատճառով, որ նա, նոյն իսկ իր հասարակական դրութեամբ, ոչնչացնում է ամեն՝ մի կլասային ար բարետութիւն, ամեն՝ մի ստորադրեալ դրութիւն ու շահոգործութիւն (exploitation): Հասարակական արդիւնաբերող ոյժերը, որ զարգանալով այլ ևս վեր են բուժուած դիախ ընդունակութիւններից, սպասում են միայն յարմար բոպէին, որպէս զի փոխանցվեն կօմմունական դրութեամբ կազմակերպված պրօլէտարիատի ձեռքը, նրա համար, որ հաստատվէ այնպիսի կազմակերպութիւն, որը հասարակութեան ամեն՝ մէկ անդամին միջոց տայ մասնակցել ոչ միայն արդիւնաբերութեան մէջ, այլ և հասարակական հարստութիւնների բաժանման ու կարգադրութեան մէջ։ Այդ կազմակերպութիւնը, չնորհով ամրող արդիւնաբերութեան նպատակայարմար վարչութեան, կարող կը լի նի մինչեւ այն աստիճան աւելացնել հասարակութեան արդիւնաբերող ոյժերը և նրանցով ստեղծմազ արդիւնքները, որ կարողութիւն կունենայ շարունակ աւելի ու աւելի ընդարձակ կերպով ապահովացնել իւրաքանչիւրի խելացի պահանջների գոհացումը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԵԶԱԿԻ».

## ԱՎ. ԷՆՉՈՎ. Է ՍՊԻՌՈՒՄ.

Գուցէ ձեզ պատահել է կարդալ իսկ եթէ ոչ կարդալ, գոնէ լոել մէկ անզիւտկան գրքի մասին, որի վերնագիրն է „Խնդնօգնութիւն”։ Այդ գիրքն ունեցաւ բազմաթիւ տպագրութիւններ, գովեց և փառաբանվեց։

Այդ գրքի հեղինակը բերումէ մի քանի օրինակներ այլ և այլ մարգնանց կենաքից, որ առաջ ոշինչ շունենալով յետոյ ձեռք են բերել հարստութիւն, փառք ու բարձըր գիրք։ Ոչինչ շունենալով՝ իսկ, չնորհով լոկ անձնական աշխատանքի ու ճարագիկութեան, նրանք ժամանակով գարձել են հարուստ, միլիոնատէր, բարձրաստիճան։ Գոնէ այդպէս է պատմում այդ գրքի հեղինակը (նրա անունն է Ամացլա)։

Արգեօք զիտէք թէ ինչո՞ւ այդ գիրքը տպագրվում ու ծախվումէ Անզիւտյում այդպիսի սիրով թէ ինչո՞ւ այն պիսի ապահութեամբ թարգմանվումէ ուրիշ լեզուներով։

Անզիւտյում ինչպէս և ամեն աեղ, աշխատաւորների կեանքը վատ է, շատ վատ։ Երանք մեռնում են հարիւններով հաղարներով աղքատութիւնից, քաղցից, հէնց այնպէս, ինչպէս Եկհատանումն չը նայած որ Անզիւտ,

որպէս առում են, աշխարհիս ամենահարուսա երկրն է։ Արդ պտղառվ այնքան էլ զարմանալի չէ, որ Ոնդիս յում բանւորները տրտնջում են, ձգում են այսպէս կամ այնպէս անպատճառ ազատվել աղքատութիւնից, որի մէջ խրված են ստով զվարվ և քանիները նրանցից առում են իրենք իրենց, թէ՝ «ո՛չ այսպէս շարունակել անկարելի է, ինչ որ էլ լինի, զարձեալ անհրաժեշտ է ամեն բան կերպարանափոխել»։

«Ոմն բան կերպարանափոխե՛ն» . . . ինչպէ՞ս չէ. Հենց այն է, թոյլ կը տանք, որ զուք էլ անեք, — մտածում են հարուստ անզիւցիները, որ չը գիտեն ոչ ցուրտ, ոչ քաղց և որ այդ պտղառվ էլ կերպարանափոխելու ոչինչ չունեն։

Եւ նրանք սկսում են երկար ու բարակ ճառել թէ տո հասարակ աշխատաւորների զրութիւնը այնպէս էլ վատ չէ, ինչպէս նրանք երեւակայում են և եթէ երբեմն պատահում է, որ նրանցից ոչնչանում, վիճանում են՝ դա էլ ըստ մեծի մասին անօշնական, պարապ և գուցէ մինչև անգամ գինեմոլ մարզիկն են» «Ով ուզում է աշխատել» ասում են նրանք, «նա կը հասնէ ամեն բանի, միայն թող ամեն մէկը աշխատէ, թող մտածէ միայն իր մտսին։ Ամեն մի մարդ կարող է ապրել և նոյն իսկ հարստանալ սեփական աշխատանքով»։

Հիմա հասկանում էք թէ ինչո՞ւ համար ինքնօգնութեան մասին ճառող զիրքը այնքան զովիում է, թէ ինչո՞ւ համար թարգմանիում է բալոր լեզուներով, թէ ինչո՞ւ համար յայտնվում են ուրիշ շատ զրոյիներ և ո, որոնց մէջ հը բաշքներ են պատմում այն բանի մասին, թէ ինչե՞ր կու

նենային բանւորները, եթէ շարունակ աշխատէին, բանէ ին տառնց հանգստանալու։ Նրա համար որ ամեն տեղ ինչպէս Ոնդիս յայում, ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, նոյնպէս և Լեհաստանում, կան բանւորներ, որ ըզ գում են թէ, իրենց զրութիւնը շատ վատ է, կան նոյնպէս և աղաներ, որ զզում են թէ իրենց զրութիւնը շատ լաւ է և ցանկանում են, որ բանւորները փոխարէն մտածելու կերպարանափոխել ամեն բան, նոյնին իրենց աղքատութեան ու նեղութեան վրայ, ինչպէս աշխարհիս մի շատ արդարացի ու կանօնաւոր բանի վրայ։

Այս գրքոյի մէջ ես ուզում եմ խօսել ձեզ հետ այն բանի մասին, թէ արդեօք յիրաւի ճշմարտութիւնը են ասում այդ աղաները, այօնքն ճիշդ է, որ ամեն մարդ ապրում է իր աշխատանքով, ճիշդ է, որ ինքնօգնութեամբ կարելի է հասնել ամեն բանի։

### Ա.

«Ոմն մարդ ապրում է իր աշխատանքով» : Այդպէ՞ս է արդեօք։

Առաջին հայեացքից թվում է թէ դա իսկապէս այդ պէս է։ Հենց տեսէք թէ զրա մասին որքան խօսվել և գրվել է լրագիրներում, ամսաթերթերում, զրքերում ու մինչեւ անգամ եկեղեցական ամբիոններից բարողվել Բացի զրանից՝ միթէ շատերին չէ թվում, որ իրաւ կօշկակարական աշխատանքով գերձար ապրում է իր կօշկակարական աշխատանքով գերձար կը — զերձակութեամբ, ուսուցչութեամբ, որ

ամեն գործարանատէր նոյնպէս աշխատում է եթէ ոչ իր ձեռքերովկ զնէ զլիսով. իւկ մինխարները (նախարարները), թագաւորները, ցարերը, մի՞թէ նրանք ևս չեն ծանրաբեռնված աշխատանքով ստորագրելով այլ և այլ թղթեր:

Բայց մի՞թէ իրապէս այդպէս է. Միթէ ամեն մարդ ապրում է իր աշխատանքով: Գուք կը զարմանաք զուցէ, եթէ ևս ասեմ, որ ոչ մի մարդ չէ ապրում իր սեփական աշխատանքով և ոչ միայն թագաւորները, մինխարները, ոչ միայն գործարանատէրն ու վաճառականները, այլ և ամբողջ բանւոր ժողովուրդը:

Օրինակ՝ եթէ կօշկակարը ոչ միայն կօշիկներ կարէր, այլ և ունինար մի կաոր հոգի սրաեղ կարող լիներ ցորեն ցանել անկել բանջարեղէն, եթէ նա ինքն մաներ, զործէր ու կարէր իր համար հագուստ, եթէ՝ մի խօսքով այն բոլորը, ինչ նրան անհրաժեշտ է, նա պատրաստէր ինքն իր տանը — միայն այն ժամանակ մենք կարող կը լինէինք ասել՝ թէ արգա՛րե նա ապրում է իր աշխատանքով:

Եւ յիրաւի, մի ժամանակ, մի քանի գար սրանից առաջ երբ ամեն քաղաք ունի բաւականաշատ սեփական հող և ամեն արհեստաւոր էլ իրիք քաղաքի բնակիչն ու նէր իրաւոնք այդ հոգի վրայ, այն ժամանակ արհեստաւորները պատրաստում էին բոլոր անհրաժեշտ բաներն իրենց տանը, իրենց կաոր հոգի վրայ և ապրում էին իւրենց սեփական աշխատանքով:

Բայց այժմ ինչպէս յայտնի է, զա այդպէս չէ. Արէս տաւորը շունի իր կաոր հոգը և օրինակ՝ կօշկակարը կարող է կարել միայն կօշիկներ և ուրիշ ոչինչ:

Ներով չէ կարելի կշտանալ նրանք չեն կարող հագստի անդ ծառացել Մի և նոյնը կարելի է ասել ևս զերձակի, հիւսի, բարտաշի և այլն մասին: Գերձակը չէ կարող ուտել և ոչ խմել իր կարած հագուստը. քարտաշը ճաշին չէ ուտում իր տաշած քարերը: Իսկ ինչ ասել թագաւորների, մինխարների և դրանց նմանների մասին նըրանք ոչ թէ իրենց համար աշխատել չը զիտեն, այլ և ուտել իրենք չեն կարաղանում — չէնց ամեն բան պէտք է նրանց գնչին մօտեցնել:

Եթէ կայ մեզ մօտ մէկը՝ որ գեռ կարող է ասել՝ թէ ապրում է իր աշխատանքով — զա զիւզացին է: «Եա գոնէ ինքն է արդիւնարերում հացը, կաթը, բանջարեղէնը, երբեմն մինչեւ իսկ հագնելիքը, թէկ վերջին ժամանակները այդ էլ կամաց կամաց պակասում է, որովհետեւ չուկայում հագնելիք թէ՝ աւելի զեղեցիկը և թէ՝ աւելի նուրբն ու աժանը կարելի է գտնել:

Իսկ մի քանի այլ երկիրներում զիւզացիները տանը չեն էլ պատրաստում մինչեւ իսկ այն, ինչ որ իրենց հարկաւոր է սեփական ամենօրեայ պէտքերի համար: Նրանցից ուտում պատրաստում են միմիայն զինի, ումանք էլ ցանում են միմիայն կառւ, միւները բանջարեղէններ և այլն, իսկ մնացած բոլոր անհրաժեշտ պէտքերը թէ՝ կերակրի և թէ՝ հագնելիքի մէջ գնում են շոկայում:

Ոյսպէս, զուր տեսնում էք, որ ոչ ոք կամ թէ զրեթէ ոչ իրաւոնք շունի ասելու թէ ապրում է իր սեփական աշխատանքով. կօշկակարը ապրում է զերձակի, քարտաշի, հիւսի, զիւզացու աշխատանքով, զերձակին էլ

ապրումէ կօշկակարի, քարտաշի, հիւսնի աշխատանքով  
և այլն. Ամեն մարդ ապրումէ ոչ թէ իր աշխատանքով,  
այլ ուրիշների, ուրիշ մարդկանց աշխատանքով:

— Բայց գրանցից ամեն մէկը աշխատում է, կը պա-  
տասխանէք զորք. նրանցից ոչ մէկը ոչինչ չէր ունենալ,  
եթէ չաշխատէր:

Դա ճիշդ է և հէնց այդ է պատճառը, որ մենք էլ չենք  
ասում թէ ամեն մարդ ապրում է սեփական աշխատան  
քով այլ ասում ենք՝ նա սեփական աշխատանքով իր  
ապրուստն է և այլ թայ թում:

— Բայց միթէ մի և նոյնը չէ՝ ապրել իր աշխատան-  
քով, կամ իր ապրուստը հայթայթել այդ աշխատանքով:

ԱՇ դա մի և նոյնը չէ և ահա բնշու:

Եթէ կօշկակարը, զերձակը, երկրագործը և այլն ի-  
րագէս ապրէին իրենց աշխատանքով եթէ, ինչպէս որ  
առաջ էր, նրանք պատրաստէին բոլոր անհրաժեշտ պէտ-  
քերը իրենց մօտ տանը, այն ժամանակ ամեն մէկը նը-  
րանցից կարող էր ապահով լինել որ թէև իր վիճակը  
միշտ մի և նոյնը չի լինից բայց և քաղցից չի մեռնիլ և  
կարող կը լինի մի կերպ գորս պրծնել տանել լինչդեռ  
հիմա կօշկակարը կարումէ միայն կօշիկներ և պատրաս-  
տում է այնքան, որքան կարող է, որպէս զի յետոյ ծախէ,  
ինչպէս ամեն մէկ ուրիշ ապրանք: Եթէ գնող գտնվէ —  
հօշտաց լաւ: կօշկակարը կը ծախէ կօշիկները և ձեռք  
բերած ստակով կը գնէ ինչ որ իրեն անհրաժեշտ է: Իսկ  
եթէ ը ծախէ: Եթէ նրան պատասխանե՞ն թէ առանց  
այդ էլ կօշիկ բաւական կայ և չը մտնե՞ն նրա խանոթը:

Ի՞նչ կը լինի այն ժամանակ: Կարո՞ղ կը լինի իր երախա  
ներին կօշիկներ ուտեցնել: Կարո՞ղ կը լինի կօշիկները  
առուրքի տեղ և կամ իր պարտքը վճարել վաշխա-  
ռուին կամ բանկանտէրին և այլն:

Այժմ գուք տեսնում էք որ ապրուստը հայթ այ  
թել սեփական աշխատանքով և ապրել սեփական աշ-  
խատանքով մի և նոյն բանը չէ:

Քանի որ մարդիկ ամեն պիտօքըները իրնք էին պա-  
տըրաստում տանը, քանի որ նրանք շատ քիչ էին ծա-  
խում իրենց ապրանքները, կարելի էր ասել որ մինչ այդ  
ժամանակ նրանք ապրում էին իրենց աշխատանքով: բայց  
սկսած այն օրից, երբ մարդիկ սկսեցին պատրաստել ծա-  
խելու համար կօշիկներ, կզարկներ, հագուստ և այլն,  
նրանք արդեն սկսան աշխատել առաւել ուրիշների, քան  
իրենց անձնական պէտքերի համար: Եւ ահա այժմ վար  
շաւայի կօշկակարը սկսաւ կօշիկներ կարել ուսու արհես-  
տաւորի համար: Առա կտաւագործ սկսաւ բանել վար  
շաւայի կօշկակարի համար, Ամերիկայի գաղթական-  
երկրագործը հացի պաշար հաւաքել Անգլիայի բանուոր,  
ների համար, Անգլիայի բանուորներն ել սկսել են երիտ-  
թէ ու պալպատէ զործիկներ մատակարարել Վարչաւայի  
բանուորներին:

Ուրիմն այն ժամանակից, երբ արդիւնաբերութիւնը  
յատկացվեցաւ ծախմելու համար — ոչ ոք այլ ևս չէ աշ-  
խատում իր համար, այլ ամենքն աշխատում են ուրիշնե-  
րի համար, ոչ ոք չէ ապրում սեփական աշխատանքով,  
այլ ուրիշների, ուրիշ մարդերի աշխատանքով:

Շատ բարի Աւրեմն իր աշխատանքով ոչ ոք չէ առ  
բում, այլ միայն իր ապրուստն է հայթայթում, առ ար  
դէն մէկ անտաբակունելի ճշմրտութիւն պէտք է լինի

Բայց ո՞չ զա էլ գեռ այնքան ճշմրտած չէ, դեռ շատ  
բան կարելի է աւելցնել զրա վրայ Ասկայն առայժմ  
ենթագրենք, որ կայ բաւական ճշմրտութիւն նրա մէջ,  
թէ ամեն մէկը սեփական աշխատանքով է հայթայթում  
իր ապրուստը:

Բայց ի՞նչու անպատճուռ աշխատանքով Արով-  
չետե, երբ մէկը ծախումէ իր շինած բաները, լինի դա  
կօջիկ կամ հագուստ, ամանեղէն կամ դանակ, նրա առ  
րանքը գին են գնում աշխատանքի համեմատ և աշխա-  
տանքի համեմատ էլ վճարում Բացատրենք այդ կէտն ա-  
ւելի մանրամասն կերպուի

Ենթագրենք, որ կօշկակարը կօշիկների վրայ աշխա-  
տել է մէկ ամբողջ օր և գնել է զրա փոխարէն 10 ար  
շին կտաւ Այս ենթագրութեան մէջ չը կայ ոչինչ անսո  
վոր բան, մարդը աշխատել և զրա համար էլ ստացել է  
կտաւը: Բայց ենթագրեցեք մի բառէ, որ աշխարէիս երե  
սին կայ մէկ այնպիսի երջանէկ երկիր, ուր կօշիկները  
երկնքիցն են թափվում: Այդպիսի երկիր չը կայ, բայց  
եթէ լինէր, ինչպէս եք կարծում, արդեօք կօշկակարին  
շատ կը վճարէին իր կօշիկների համար:

Ի հարկէ ոչինչ Ատրպիկ կտաւէն թէ կօշիկների հա-  
մար ոչինչ հարկաւոր չէ վճարել թէ նրանք աշխ-

ամենք չեն նոտել և թէ հետեւալէս ամեն մարդ կա-  
րող է նրանց ձրիտալէս ունենալ, և մեր կօշկակարը քաղ-  
ցից չը մեռնելու համար՝ ստիգմած կը լինէր ձեռք զար  
նել մէկ ուրիշ գործին:

Թէ մեզ մօտ կօշիկները ծառի վրայ բնաւ չեն բուս  
նում, բայց կան այնքան շատ բաներ, որոնց համար ոչ  
ինչ չէ կարելի ստանալ, որոնք ոչինչ չարժեն և այդ մի-  
այն այն պատճառով, որ նրա վրայ աշխատանք բոլոր-  
վին չէ գործադրվել Աչ աղբիսիրի ջրի, ո՞չ էլ գետի առա-  
ղի համար ոչ ոք ոչինչ չէ վճարում, որովհետեւ թէ մէ-  
կը և թէ միւսը կարելի է ձեռք բերել առանց աշխատան-  
քի, որովհետեւ նրանք մարդկացին աշխատանքի պէտքը  
չունեն:

Եւ ընդհակառակն որչափ մի բան շատ է պարունա-  
կում իր մէջ մարդկացին աշխատանք, այնքան երկ ինչպէս  
առում են, աւելի է նա պարունակում իր մէջ որ ժէք,  
այնքան էլ շատ կը վճարեն նրա համար Աէկ արշին կը  
տաւի համար աւելի կը տան, քան մէկ արշին միտկալի:  
Ինչո՞ւ Արովհետեւ մէկ արշին միտկալը աւելի շուտ և ա-  
ռուել թիշ զժուարութեամբ կարելի է պատրաստել այս  
ինքն նրա համար հարկաւոր է աւելի թիշ աշխատանք,  
քան թէ մէկ արշին կտաւի համար Ասկէ շղթան առա-  
ւել թանկ է, քան օրոգալատէ: Ինչո՞ւ Նրա համար միթէն  
որ ոսկին աւելի լաւ է փայլում, կամ աւելի ծանր է: Աչ  
արզականէ զղթան կարող է նոյնպէս փայլել և ծանրու-  
թեամբ լինել մի և նոյնը, ինչպէս ոսկէ, բայց ոսկին  
մեծ զժուարութեամբ է ձեռք բերվում: Հարկաւոր է շատ

ու շատ մեծ աշխատանք, որ կարելի լինի սովոր ստանալ հանքից և հետեւաբար ոսկէ շղթացի մէջ պարունակ վում է առելի աշխատանք, քան թէ պազարատէ:

Այդ պատճառով է, որ երբ արհեստաւորին, կօշկա կարին, գերձակին, էամ հացթուխին վճարում են կօշիկների, հագուստի կամ հացի համար, գտ իրավէս վճարում են նրանց այն աշխատանքի համար, որ պարունակվում է այդ կօշիկների, այդ հագուստի, այդ հացի մէջ ։ Եթէ մի հաց պատրաստելու համար հարկաւոր լինի մի ժամ, իսկ մի զոյգ կօշիկների համար՝ տասը ժամ, այն ժամանակ մի զոյգ կօշիկները կարելի է փոխանակել տասը հացի հետ, որպէս կամ կօշիկների մէջ պարունակվող աշխատանքը ( այսինքն՝ ինչպէս տառմ են կօշիկների արժէքը ) տասն անգամ աւելի է, քան մի հացի մէջ պարունակվող աշխատանքը ( այսինքն հացի արժէքը \* ) :

Եթէ մէկ արշին ասուին ( մահուց չուխա ) վճարում են մէկ արծաթէ բուրլ գանրա համար է որ ասուի պատրաստելը ( այսինքն ոչխարհներին խնամելը, բուրդ խողելը, մանելը, ասուի ներկելը և այլն ) պահանջում է այն քան աշխատանք որբան մէկ արծաթէ բուրլի պատրաստելը ( արծաթ գանելը, հալելը, մաքրելը, նրա ճանապարհանքում և այլն ), որ կը տեէ օրինակ՝ տասը ժամ։ Մէկ արշին միտկալին մենք վճարում ենք միայն տասը

\* ) Եթէ ձեզնից հարցնեն թէ որբան է բաժակի, կօշիկների, հագուստի արժէքը, գուք կարող եք պատասխանել որ զրանց արժէքն է այն աշխատանքը, որը պարունակվում է այդ բաժակի, կօշիկների, հագուստի մէջ։

կօպէկ, որովհետեւ նրա պատրաստելու համար ( բամբակ ցանելը գործելը, ներկելը և այլն ) գործադրված է ոչ թէ տասը ժամ, այլ լոկ մի ժամ։

Այս թէ ինչու կարելի է ասելու գրել թէ կօշկակարը, գերձակը, հիւսնը, առհասարակ աշխատաւորը իր ապրուս տը հայթացթում է սեփական աշխատանքով։ Նրանք բոլորն էլ պատրաստում են տարբեր առարկաներ։ այդ առարկաները իրեւ ապրանք յատկացվում են ծախելու համար և վճարվում են ճիշտ այնքան, որքան նրանց մէջ պարունակվում է աշխատանք։ Այսպէս ուրիմի որ և է արհեստաւոր ինչքան շատ է աշխատում, բանում, ինչքան շատ աշխատանք է ամփոփում նա ապրանքի մէջ, այնքան էլ աւելի արժէքաւոր է նրան զարձնում իր աշխատանքով, այնքան էլ աւելի է ստանում ծախելիս, այնքան էլ աւելի են վճարում նրա ապրանքին։

— Այս աեւնում էք, կարող են ասել ինձ այժմ զուք այնպէս հակառակ էիք „ ինքնօգնութիւն ” գործին, իսկ այժմ ինքներդ ասում էք նոյնը, ինչ և նա, այսինքն ով շատ է աշխատում, նա էլ շատ է ստանում։

Բայց սպասեցէք, մի շտապէք յանդիմանել այլ լըսեցէք ինձ։

Վերև ասացի՞ թէ արհեստաւորը որբան շատ աշխատանք է գործադրում ապրանքի վրայ, այնքան էլ մեծ է լինում նրա ստացած վճարը։ Կօշկակարը կրկնակի տակ կով լսու կարած կօշիկների համար աւելի մեծ վճար կըս տանայ, քան վատ կարածի համար։

Այդ բոլորը ճիշտ է, բայց նախ քան կօշկակարը կա-

րողանաց կարել կօշիկներ՝ նրան հարկաւոր է ունենալ կտչի, գործիքներ, արհեստանոց և այլն, իսկ դա ստակ է նստում։ Եթէ մականագործն ուզում է կղզակներ չի ներ նոյնպէս պէտք է վարձէ արհեստանոց, գնէ գործիք ներ և ասլրէ մի առ ժամանակ, մինչ որ կը ծախէ իր շինած կղզակները։ Իսկ դրա համար գարձեալ փող է հարկաւոր։

Ով փող ունի նրա համար ոչինչ, կը սարբէ արհեստանոցը, կըսկսէ պատրաստել ապրանքները, իսկ յետոց կամաց և կամաց կը ծախէն նրանց արժեքի համեմատ, այս ինքն նրանց վրաց գործադրած աշխատանքի շափով։ Բայց ի՞նչ անի այն մարդը, որ փող չունի, որ միջոց չունի արհեստանաց բանալու, որ չէ կարող ապրանք պատրաստել, չունենալով գրա համար ոչ նիւթ և ոչ գործիքներ։ Ի՞նչ անի այն մարդը, որ — ինչպէս այդ յաճախու է պատահում — չունի և չէ կարող ունենալ ոչ որից որ և է սպնութիւն, մինչդեռ պէտք է միւսների նման ապրէ, ուտէ, խմէ, հազնպէ։ Կերկայում շուկացում որ և է բան գնելու համար լինի դա ուտելիք, կամ հազնելիք, ան հըրաժեշտ է ունենալ կամ ստակ և կամ ծախելու ապրանք։ Մեր աշխատաւորը դրամ չունի, ապրանք ունենալ և չէ կարող ուրեմն որպէս զի կարողանաց ապրել և ուտել նա ստիպված է ինքն իրեն ծախել, զառնալ վարձոր, զերի, վարձիկել ուրիշների մօտ աշխատելու համար։

— Ի՞նչ է նշանակում ինքն իրեն ծախել, զառնալ և զերի։ Աշխատել գործարանում՝ աշխատել արհեստանու

ցում — չէ որ դա գեռ գերաթիւն չէ։ Ինչպէս արհեստաւորը, նոյնպէս և գործարանական բանւորը՝ աղաս մարդիկ են, աշխատում են որի մօտ ուզում են և որքան ուզում են և ոչ ոք իրաւոնք չունի նրանց զիմին հրամաններ կարգալու։

Գիտենք թէ ինչ աղատութիւն է այդ։ Գիտենք թէ ինչպէս վարպետը (ուստան) նեղում է իր պարզ արհեստաւորներին, գիտենք թէ ինչպէս գործարաններում հաղարաւոր բանւորներ պարտաւոր են զլուխ ծոել ու սասրանալ ամենայետին զրագրի տոջեւ անգամ։ Արդեօք կը համարձակվեն նրանք բացարձակաբար յայտնել իրենց իրաւոնքները կոպտութեան պատասխանել կոպտու։ Թեամբու Արդեօք կը համարձակվեն նրանք մի պատիկ պատասխան իսկ տալ զարծարանատէրին, երբ այս վերջինը իջեցնում է նրանց վարձը կամ կարում է նրանց շարաթական աշխատանքից։ Ո՛չ չեն համարձակվին որովհետեւ նրանք զերի, նրանք սարուկ են և գիտեն որ եթէ գործարանատէրը չը լինի կանգնած նրանց յետել մարտկը ձեռքին, ողջ մէկ է, զրու տեղը քաղցը կը լինի։ Որ մըտակից էլ սոսկալի է։

Այն մարդը որ ծախում է իր աշխատանքը չէ կարող լինել աղաս ։ Յա պէտք է ունենայ իր աերը և իսկ կապէս էլ ունի։ Աղաս են միայն այն մարդիկը, որ պէտք չունեն իրենց ծախելու։ Իսկ ձեռք բներել այդպիսի աղատութիւն ներկայումս չառ զժուար է։ Աշխատաւորը զը նում է գործարան որովհետեւ ստիպված է գնալու, քանի որ չունի սեփական նիւթ ու զործիքներ, նա հնազանդվում

է գործարանատէրին, որովհետեւ չէ կարող չը հնազանդ վել որովհետեւ գործարանատէրն ունի երկու ուժեղ օգ նականներ՝ նախ կառավարութիւնն ու զօրքը և երկրորդ քաղցը, որ սպառնում է բանւորին՝ որտ զործ չունեցած ժամանակը։ Շատ զժուար է կուել այդպիսի թշնամիների հետ։ աւելի ևս զժուար է նրանց յազթել։ սակայն այն ևս ճշմարիտ է, որ աշխատաւորները մեզ մօտ մինչև հիմա չեն էլ փորձել կուելու։

## Գ.

— Գերի կամ՝ ոչ գերի — դա իսկապէս մի և նոյն բանն է՝ կը պատասխանէք զորք։ Բանը նրանում չէ թէ ովէ զերի, ովլ ազատ։ այլ նրանումն է՝ թէ արդեօք ճիշդ է, որ ամեն մարդ սեփական աշխատանքովն է իր ասպրուս արք հայթայթում, որ ամեն մէկը կարող է իր սեփական աշխատանքով հարստանալ։

Էլի կասեմ՝ ձեզ — մի շոտագէք, զրան էլ կը հասնենք։ պէտք է ամեն բան պարզել, ինչպէս հարկն է։

Ամեն աշխատաւոր, լինի դա փականագործ, հիւսն, զերծակ թէ կօշկակար, ստիպված է ծախսելու իրեն, եթէ չունի ոչ փող, ոչ գործիքներ և ոչ արհեստանոց իր մօտ աշխատելու համար։ Վաղ թէ ուշնա վերջապէս գտնում է մի գործարանատէր կամ վարպետ, որը նրան զնում է։ Ինչո՞ւ է նրան զնում։ Արթէ նրա համար որ բան ուրի տեսքն ու չնորհքը հաւանեց։ Ոչ Արթէ նրա համար որ խղճաց այդ բանւորին և ուղում է թեթեացնել

նրա թշուառութիւնը։ Ի հարկէ ոչ<sup>1)</sup> Այլ գնում է բանւորին, իմանալով որ նա գիտէ և կարող է կառավարել քարգարը, ձեծել մուրնով, հարթել կօշկի տակերը, մի խօսքով զնում է նրա համար, որ նա ունի բանող (բանելու) ոյժ։

Գնելով բանւորին, գործարանատէրը կամ վարպետը առջեւ ունի միայն նրա՝ իրեն աշխատաւորին ոյժն ու կարողութիւնը։ Եթէ չը լինէր նրա այդ ոյժը, գործարանատէրը մինչև անգամ ձրի էլ չէր վերցնիլ նրա համար զիսաւոր հարցը նրանումն է թէ ինչքան վճարել այդ ոյժի համար։ գրանումն է ամիսով ինպիրը։ Կժուար չէ հաս կանալ թէ ինչքան է հարկաւոր վճարել մի բաժակին, մի քթոցին, մի զոյգ կօշիկների համար և այն։ Խոկ դա որոշ գում է պարզապէս աշխատանքի ժամերի այն քանակութեամբ, որ գործարգուած է այդ առարկաները շինելու համար։ Պննենք թէ մի բաժակ պատրաստելու վրայ գործարգուած է կէս ժամ աշխատանք, մի զոյգ կօշիկների քը սան ժամ, մի պնակի — մէկ ժամ։ Յետոյ ընդունենք որ մեզ մօտ ընդհանրապէս մի ժամ աշխատանքի համար վճարվում է տասը կօպէկի \* ) ( որովհետեւ արծաթէ տասը կօպէկի մէջ գտնվում է մի ժամի աշխատանք )։ Հիմա արդէն զժուար չէ որպէս թէ ինչ արժէ բաժակը։ Եթէ նրա վրայ գործարգուած է կէս ժամ աշխատանք՝ նշանակում է նա արժէ տասը կօպէկի կէսը, այն է հինգ կօպէկի Եթէ կօշիկների կարելը վերցրել է քան ժամ՝ ուրեմն

\* ) Բուրգը հարիւր կօպէկ է, հաւասար 16 դրուշի։ Ծ. թ.

բանքի, որ արժէ վաթուն կօլէկ:

Այս պէտք աշխամ տառն կօպ. կամ թէ երկու բուրդ, եթէ մի պնակ չինելու համար հարկաւոր է մի ժամ՝ նրա գինն էլ կը լինի տասը կօպէկ:

Բայց ի՞նչպէս որոշել մի մարզու արժէքը. ո՞րքան վը ճարել նրա ոյժի համար Եւ արդեօք լաւ բան է մարզուն գին գնել ինչպէս ապրանքի:

Լու է, թէ վաս — դա ուրիշ հարց է. ի՞նչ արած, այլ այդպէս են անում. մարզու ոյժին գին են գնում. ի՞նչպէս ապրանքին Ուրեմն գնենք թէ բանւորք՝ այսինքն նրա բանող ոյժը՝ գնվում է մեկ օրուն. Ոյնուհետեւ որպէս զի այդ բանւորք կարսդանայ ապրել ու աշխատել. կարսդանայ պահպանել իր բանւորական ոյժը՝ պէտք է ստանայ օրական 60 կօպէկ վարձ՝ որը նա մոխում է (ուտելու, հագնելիքի, բնակարանի և այլն վրայ) իր ոյ մերը կրկին վերանորոգելու համար. այդ գէպում մենք կարսդ ենք ամել որ նրա բանող ոյժը արժէ 60 կօպէկ կամ վեց ժամ\*). աշխատանք (եթէ տասը կօպէկը անի մի և նայն արժեքը ինչ որ և մի ժամ աշխատանքը):

Գործարանատերը քաջ գիտե, որ բանող ոյժը արժէ վեց ժամ՝ աշխատանք՝ այսինքն այնքան, որքան արժէ վեց պընակ կամ տասն և երկու բաժակ. ուստի և վճարում է իր բանւորին նրա ոյժի համար՝ իրման ազ

\* ) Հարկաւոր է միտ մոքի մէջ պահել որ բանւորական ոյժի արժէքը համասար է այնքան ժամկայ աշխատանքի որքան պահանջվում է բանւորի կեանքը պահպանելու համար:

Այժմ մի անգամ ես վերադառնանք մեր հարցին. ին չո՞ւ է զնում գործարանատերը գործաւորի բանող ոյժը:

Ինչու է ծախում նրան աշխատաւորը — հասկանալի է. այդ անել նրան ստիպում է քաղցը, որն աւելի ուժեղ է, քան մարդկային աղատութեան բնածին զգացումն, քան ամօթը. Անախանձելի է այն անրազդ կանանց ճակատա. գիրը, որ գուրս են գալիս փողոցը իրենց մարմինը ծախելու համար. բայց միթէ քաղցը չէ, որ նրանց հասցըել է մինչ այդ անկումը:

Ես չեմ ուզում այստեղ համեմատել ընկած կնոջ ցածր արհեստը աշխատաւորի ազնիւ աշխատանքի հետ, որը անհրաժեշտաբար պէտք է ծախէ իր աշխատանքը. բայց այնուամենայնիւ պէտք է խոստվանվել որ առաջնի և երկրորդի մէջ կայ մի յաշանի նմանութիւն:

Այսպէս ուրեմն ինչո՞ւ համար է գործարանատերը զնում բանող ոյժը՝ Քեֆի՞ համար. ոչ — Ուրեմն ինչո՞ւ նրա համար որ շահ տանայ, նրա համար որ հարստա. նայ և սեփական աշխատանքով\*, ինչպէս առաւմէ „Ինքն օգնութեան” հեղինակը:

Բացատրենք դա օրինակով. Դիցուք թէ մի ոմն բաց է արել բամբակի գործարան Ենթադրենք, որ գնված է հա. զար չորս հարիւր բուրլու բամբակ, մեքենաներ ութուն



րբ., գաղի ( ցաշ, լուսաւորութեան ) և մնացած բաների համար ծախսված է քսան չորս րուբի և աչա գործարանը սկսում են բանեցներ. ինչ էք կարծում ինչո՞ւ համար գործարանատէրը բացեց գործարանը. Ակնյայտ է նրա համար, որ ուղում է մանվածքը ծախսել աւելի թանգ քան ինքն է վճարել բամբակի, մեքենայի և այլն համար և ակնյայտ է, որ երբ բամբակից ստանայ մանվածք, նա չի ծախսել նրան հազար հինգ հարիւր չորս րբ., \*) այլ կը ցանկայ ըստանալ ենթադրենք, երկու հազար րուբի:

Բայց ցանկալը գեռ բաւական չէ: Հարկաւոր է իրավելս ստանալ երկու հազար րբ., խոկ կստանայ թէ ոչ — զա դեռ հարց է:

Եթէ կարելի լինէր ենթադրել թէ կը պատահէ այն պիսի մի հրաշք, որ մեքենաները կարողանային մանել բամբակը առանց աշխատաւորների օգնութեան և եթէ մանվածքը գործարանատէրը բերէր վաճառականին և ցան կանար ստանալ երկու հազար րուբի — այն ժամանակ վաճառականը նրան պարզապէս կասէր, թէ քո մանվածքի մէջ նախ և առաջ կայ բամբակի արժէքը, այսինքն հազար չորս հարիւր րբ., յետոյ մեքենաների արժէքը կամ ութսուն րբ. և յետոյ ածխի, գաղի և այլն արժէքը կամ քսան և չորս րբ., որով ընդհանուր գումարը կանէ հազար

\*) Հազար հինգ հարիւր չորս րուբին այս օրինակի վերը րերած րալոր ծախսերի ընդհանուր գումարն է, այս ինքն՝ հազար չորս հարիւր րուբը բամբակի արժէքը, ութսուն րբ. մեքենաների քսան և չորս րբ. գաղի և այլն. ընդհանը կանէ հազար հինգ հարիւր չորս րուբը

հինգ հարիւր չորս րբ. արժէքը, հետեւապէս և դրանից մի կօպէկ էլ ոչ աւելի, ոչ պակաս քեզ չեմ տալ:

Չը գիտենք թէ մեր գործարանատէրը կը հաւանէր ար զեօք այդպիսի մի պատասխան: Միայն գիտենք այնքան, որ մինչեւ օրս մեքենաներն իրենք իրենց գործել բանել չեն կարող և որ՝ բարեբազզաբար գործարանատէրերի համար՝ մեքենաները պէտք է բանեցնէ աշխատաւորը. Այդ լաւ հասկանալով զործարանատէրը վարձում է, ենթադրենք, հարիւր բանուոր և վճարում է նրանցից իրավամշիւրի բանուոր, ոյժի համար, իրեւ արանք, օրական վաթսուն կօպէկ:

Ուր օրական վաթսուն կօպէկով վարձված աշխատաւորը բամբակը մաքրում է, մանում է, չինում կծիկներ և այլն, մի խօսքով աշխատում է, մտցնելով բամբակի մէջ եր աշխատանքը. Մի ժամկից յետոյ նա կը գործադրէ մի այն մի ժամկից աշխատանք կամ կը բարձրացնէ բամբակի արժէքը տասը կօպէկով ( եթէ մի ժամ աշխատանքը արժէ տասը կօպէկ ), երկու ժամկից յետոյ զործադրելով երկու ժամկայ աշխատանք, նա բարձրացնում է բամբակի արժէքը քսան կօպէկով երրորդ ժամկից յետոյ նա զործադրած կը լինի երեք ժամկայ աշխատանք կամ կաւելացնէ նրա ամբողջ արժէքը երեսուն կօպէկով և այլն: Վերջապէս վեց ժամ աշխատանքից յետոյ, արժէքը կաւելանայ վաթսուն կօպէկով ճիշդ և ճիշդ այնքան, որքան զործարանատէրը վճարած է նրա բանող ոյժի համար: Այսպէս, վեց ժամկայ աշխատանքով բանուորը կատարելապէս փոխանակում է իր օրավարձը: Այդպէս նա աշխատում

է ամրող շաբաթը, որի ընթացքից յետոյ գործարանատէրը վերցնում է մանվածքը և տանում չուկաց, նորից երկու հազար բուրլի ստանալու ցանկութեամբ:

Ուրբան ես ուզում մանվածքի համար: Երկու հազար բուրլի, — ասում է վաճառականը. — դա շատ թանգ է: Միթէ՞ դու կարծում ես, որ քո մանվածքի մէջ խսկապէս կայ երկու հազար բր. արժէք: Արտեղից, եկ հաշւենք միասին: Մանվածքը իր մէջ ստարունակում է հազար չորս հարիւր բր. բամբակի արժէք, ութունն բր. մեքենան ների արժէք, քսան և չորս բր. ածխի, գաղի արժէք և բանող ոյժի արժէքը երեք հարիւր վաթսուն բր. (եթէ շաբաթվայ ընթացքում հարիւր հոգի աշխատել են վեց օր, օրտկան վեց ժամ և խրաբանչիւր ժամը տասը կօպէի, ընդամենը երեք հարիւր վաթսուն բուրլի), կամ բոլոր մանվածքն իր մէջ ստարունակում է հազար ութ հարիւր վաթսուն չորս բր. արժէք: Ուրիշն ես կարող եմ քեզ տալ միայն հազար ութ հարիւր վաթսուն չորս բր. և ոչ մի կօպէկ աւելի ինչպէս նշանակում է ես ոչինչ չխմշահելու: Հէ՞ որ ես ինքս ծախսած եմ հազար ութ հարիւր վաթսուն ու չորս բր.: Բայց ո՞ւր է իմ եկամուտու ինչո՞ւ համար եմ բացել գործարան, ի՞նչ բերեց նա ինձ ինչո՞ւ համար էր այդ կատակերգութիւնը: Եւ ճշմարիտ է, որ եկամուտ չէր լինի, եթէ մեր գործարանատէրը չը ստիպէր իր բանւորներին, որնք փոխանակում են իրենց ստացած վարձը վեց ժամից աշխատանքով բանել աշխատել աւելի երկար ժամոնակ:

Բայց ի՞նչո՞ւ — կարող են ասել բանւորներն իրենց

գործարանատէրին. — դու ստիպում ես մեզ բանել ուելի երկար ժամանակ, չէ՞ որ մեզնից ամեն մէկն արդէն փոխարինել է իր վարձը վեց ժամից աշխատանքով: Հէ՞ որ մենք արդէն զրինք բամբակի վրայ այնքան արժէք, որքան արժէ մեր բանող ոյժը:

Ի՞նչ եք դուք չափ խօսում: Ես ձեր բանող ոյժը զնել եմ ոչ թէ միայն վեց ժամով, այլ ամբողջ օրով և ես կարող եմ ամբողջ օրը ուզածիս պէս ձեզ չետ վարվել Չը համարձակվէք խօսել, և աշխատեցէք:

Եւ բանւորները, որ վեց ժամ աշխատանքից յետոյ ոլեար է թողնէին գործարանը և զնային հանգստանալու կամ թէ աշխատելու ամեն մէկն իր համար, ստիպված են մնալ և շարունակել բանել գարձեալ վեց ժամ: Գործարանատէրը նրանց տալիս է նոր նիւթ և այդպիսով շարունակվում է գործը: Իր ամեն մի ժամ աշխատանքով բացել աւելացնում է այս նոր բամբակի վրայ նոր արժէք և վեց ժամից յետոյ նրանցից ամեն մէկը կաւելացնէ վեց ժամաշափ արժէք: Հասկանալի է, որ այդ նոր արժէքը զործարանատէրին արդէն ոչինչ չէ նստաւմ, բոլորովին ձրի է: Ունչ աշխատաւորն աշխատելով վեց ժամ, այդպիսով աւելացնում է վեց տնգամ տասն կօպէկ (եթէ մի ժամ աշխատանքն արժէ ատուը կօպէկ) կամ վաթսուն կօպէկ արժէք: Հարիւր աշխատաւոր մէկ օր կաւելացնեն հարիւր անգամ աւելի կամ վաթսուն բուրլի արժէք, իսկ մի շարաթում բանելով վեց օր, նրանք գործ կը դնեն գարձեալ վեց անգամ աւելի, կամ երեք հարիւր վաթսուն բուրլի նոր արժէք: Եթէ այժմ մեր գործարա-

նատէրն ուղենաց ծախել իր մանվածքի այս մասը, \*) ար գեօր ո՞րքան նա կըստանայ, Ակնյայտ է որ կրկին հաղար ութ հարիւր վաթսուն ու չորս րուրլ որովհետեւ այդ մանվածքի մէջ կը պարունակվէ նոր բամբակի արժէքը՝ հաղար չորս հարիւր րուրլի, նոր մերենաների արժէքը՝ ութսուն րր., ածխի և գաղի արժէք՝ քսան և չորս րր. և վերջապէս երեք հարիւր վաթսուն ժամաշափ աշխատանք, որ նա ձրիաբար ստացել էր բանւորներից: Այժմ գործարանատէրը սիրով կը ծախէ իր մանվածքը այդ գնով, որովհետեւ նրան նստել է ոչ թէ հաղար ութ հարիւր վաթսուն և չորս րուրլի, այլ միայն հաղար զինդ հարիւր չորս րուրլի. ( Հաղար չորս հարիւր րր. բամբակի, ութսուն րր. մերենաների, քսան և չորս րր. ածխի և գաղի ). հիմա արդէն ակնյաց է, որ այդ արդիւնաբերութիւնը եկամուտ տվեց գործարանատէրին:

Անենք այժմ մեր վերջնական հաշիւը: Մեր գործարանատէրը վճարել է բոլոր բամբակի համար երկու ան գամ հաղար չորս հարիւր րր., այսինքն երկու հաղար ութ հարիւր րր., մերենաների՝ երկու անգամ ութսուն րր. այն է հարիւր վաթսուն րր.՝ ածխի և գաղի երկու ան գամ քսան և չորս րր.՝ այն է քառասուն ութ րր. և բանւորներին վճարել է երեք հարիւր վաթսուն րր. կամ բոլորը միասին երեք հաղար երեք հարիւր վաթսուն ութ րր.: Խսկ ինքն մանվածքի առաջին մասի համար կըստանայ հաղար ութ հարիւր վաթսուն չորս րր. և երկորդ մա-

\*) Այսինքն այն մասը, որ արտադրված է բանւորների չոճար ված ժամանակ:

սի համար նոյնուկս հաղար ութ հարիւր վաթսուն չորս րր. կամ բոլորը երեք հաղար եօթ հարիւր քսան և ութ րր.՝ նշանակում է նա կունենայ երեք հարիւր վաթսուն րր. շահ:

Ուրեմն, ո՞րտեղից զուրս եկաւ այդ շահը: Ակնյայտ է, որ գա զուրս եկաւ նրանից որ գործարանատէրը ոչինչ չը վճարեց բանւորներին իրենց օրվայ երկորդ կեսի աշխատանքի համար, որովհետեւ բանւորներն իրենց աշխատանքի երկորդ կէսը տվին նրան ձրիաբար, որով հետեւ բանւորները, բացի երեք հաղար վեց հարիւր ժամ վճարված աշխատանքից, գործադրեցին բամբակի վրայ կըր կին անգամ երեք հաղար վեց հարիւր ժամ չը վճարված, յաւելեալ աշխատանք, կամ ինչպէս ասում են, երեք հաղար վեց հարիւր ժամ յաւելեալ արժէք: \*)

Այժմ մենք գիտենք, թէ ինչու գործարանատէրը վար ձում է բանւորներին: Դա նրա համար է, որ նրանց աշխատանքից ստանայ եկամուտ, շահ, որ նրանց միջոցով ստանայ յաւելեալ արժէք:

Ուրեմն, ինչից է ստանում մեր գործարանատէրը երեկամուտը: Արդեօք իր սեփական աշխատանքից: Անցում՝ ոչ Հետեւարար, ուրիշ՝ աշխատանքից: Այո՛, և

\*) Հետեւարէս, ի՞նչ է յաւելեալ արժէք, Դա այն արժէքն է, որ բանւորներն աւելացնում են իրենց արդիւնա գործած ապրանքի վրայ այն ժամանակամիջոցից յ ետոյ, երբ արդէն աշխատանքով փոխանակել են իրենց բանւորական վճարը — դա բանւորի չը վճարված աշխատանքն է:

նոյն իսկ բանւորների աշխատանքից:

Բանւորներն աշխատում են իրենց համար միայն կէսօր, իսկ օրվայ միւս կէսը գործարանատէրի համար: Բանւորներն իրենց կեանքի կէսը աշխատում են իրենց: իրենց ընտանիքի, իւրայինների համար, իսկ կեանքի միւս կէսը՝ նրա համար, որ գործարանատէրն իր բամբակից կարողանայ ունենալ եկամուտ, որ կարողանայ ստանալ յաւելեալ արժէք:

Այն, ինչ որ մենք ասացինք մեր բամբակի գործարանատէրի մասին, նոյնը կարելի է ասել աշխարհիս երեսին գտնված ամեն անսակ արէստանոցների տէրերի և զործարանատէրերի մասին, Նրանք ամենքն էլ զնում են աշխատաւորներին, նրանք ամենքն էլ զնում են աշխատաւորների բանող ոյժը հենց միմիայն նրա համար, որ նրանց աշխատանքից ունենան շահ: որ ստիպեն բանւորներին բանել աւելի երկար ժամանակ, քան հարկաւոր էր, որ այդպիսով հարստանան:

Դ.

Ի հարկէ, զուք կը համաձայնվէք այն բոլորի հետ, ինչ այժմ ես ձեզ պատմեցի: Մի բան միայն զուք կարող է իր առարկել թէ այնքան էլ ձից չէ բամբակի գործարանի օրինակը: Ե՞րբ և որտեղ է լաված, որ մեքենաները արժենան միայն ութուն բր: կամ թէ բամբակը արժենայ միայն հազար շրս հարիւր բր: - Շատ ճիշտ է: Այն թւերը որ բերեցինք այս օրինակում՝ նրա համար

միայն ընտրեցինք, որ կարելի լինէր աւելի պարզ ու ճիշտ կերպով բացատրել թէ ինչ է յաւելեալ արժէք: Այժմ ես օրինակ կը բերեմ կեանքից իսկ և այդ թւերն արիքան ճիշտ կը լինեն, որ ոչ ոք չը կարողանայ ոչինչ առարկել:

Ինչպէս ամենքին յայտնի է, Անգլիայում արդիւնագործվում է մեծ քանակութեամբ բամբակի<sup>\*</sup>): Այնունզ արդէն վաղուց գոյութիւն ունեն մեծ չոփէ - գործարաններ, վաղուց է ինչպէս բանւորներն այնտեղ այլ ևս չեն աշխատում իրենց համար, այլ ստիպված են ծախոել իրենց աշխատանքը գանալով սովորական վարձփոր. վաղուց է արդէն որ նրանք դիմանաւմ են թէ դրկանքի, թէ քաղցի: Բայց ընդհակառակին գործարանատէրերը հարստանում են: Եւ աչա, ենթագրենք, որ մէկ այդպիսի բամբակէ գործարանի տարեկան ծախութ և նրա արգիւնաբերութիւնը գործարանատէրին նստած է հարիւր երեսուն շրս հազար երկու հարիւր յիսուն բր:, և տարվայ ընթացքն աւարտվելուց յիսույն նա ծախութ է իր մանվածքը և ստացել նրա համար հարիւր յիսուն ինն հազար բր:: Աըշանակում է նա ստացել է զուտ շահ քսան շրս հազար եօթ հարիւր յիսուն բր:, կամ տասն և ութ տոկոս: Դուք զիտէք, հարիւր, որ զա դեռ այնքան էլ մեծ շահ չէ, քսանի որ մեզ մօտ իսկ կան այնպիսի գործարաններ, օրինակ, շաքարի գործարաններ, որ տալիս են քառասուն,

\* ) Անգլիայում 1873 թւին երեսուն երկը միլիոն հինգ հարիւր հազար իլիկներով արգիւնագործված է հազար երկու հարիւր վաթսուն շրս միլիոն զրվանքական:

յիսուն և աւելի իսկ տոկոս — առ հարիւր — շահ։

Հիմա տեսնենք թէ ո՞րտեղից է ստանում մեր գործարանատէրը այդ շահը։

Աւելի պարզութեան համար հաշվենք թէ նա արդիւնաբերութեան վերաց շաբաթական որբան՝ է ծախսում։

Երա գործարանում կայ տասը հազար իլիկ, որ շոգի միջոցով է շարժվում։ Մի իլիկ (ի հարկէ բանւորների օգնութեամբ) մի շաբաթում կարող է պատրաստել մի գրվանքա մանվածք։ Իսկ տասը հազար իլիկից կատաց մի շաբաթում տասը հազար գրվանքա մանվածք։ Բայց տասը հազար գրվանքա մանվածք ստանալու համար հար կաւոր է զնել աւելի քան տասը հազար գրվանքա բամբակ, որովհետեւ գործելու ժամանակ միշտ մի փոքրիկ մասը փճանում է — տականքը։ Մեր գործարանի համար հար կաւոր է զնել տասը հազար վեց հարիւր գր. բամբակ, որովհետեւ արդիւնագործութեան ժամանակ վեց հարիւր գր. կորչում է։

1871 թ. Անգլիայում մի գրվանքա բամբակն արժէր տասն և ինն ու կէս կօպէկ, հետեւապէս տասը հազար վեց հարիւր գր. բամբակի վրայ պէտք է ծախսվէր տասը հազար վեց հարիւր անգամ աւելի, այսինքն երկու հազար փաթուն եօթ րր., բայց այդ բամբակից մանվածք ըստանալու համար անհրաժեշտ են մեքենաներ, զանագան օժանդակ նիւթեր և գործաւորի աշխատանքը։ Մեքենաները, այսինքն շոգէ մեքենաները և իլիկները արժեն վաթուն վաթուն կամ առ լոր բանւորներին, ուրեմն, շաբաթական կը տրվէ երեք հարիւր երեք րր. և եօթանասուն հինգ կօպ.։

) Երեք գրվանքան մօտաւորապէս մէկ օխա է, Ծ. թ.

Հազար րր.։ Աակայն մի անգամ՝ գնված մեքենաներն անմիջապէս չեն մաշվում, այլ գեռ կարող են ծառայել տասը տարի. այդ պատճառով մեքենաների տարեկան ծախսը չէ լինի վաթուն հազար րր., այլ տասն անգամ պակաս, այսինքն տարեկան վեց հազար րուլլի. իսկ շաբաթական ծախսը (եթէ տարին ունի յիսուն աշխատութեան շաբաթ) կը լինի վեց հազարից յիսուն անգամ պակաս, այսինքն հարիւր քսան րր.։ յետոյ մեքենաների համար անհրաժեշտ է քարէ ածուխ (կաթաները տաքացնելու համար), իւղ (անիւները բոելու համար), գաղ (գործարանը լուսաւորելու համար) և այլն։ Մեր գործարանում քարէ ածխի համար շաբաթական ծախսվում է քսան չորս րր. վաթուն կօպ. գաղի համար վեց րր., գործարանի վարձ վճարվում է շաբաթական երեսուն վեց րր.։ Շաբաթական ամերող ծախսը՝ բամբակի, ածխի, գաղի, իւղի, չէնքի և այն կանէ երկու հազար երկու հարիւր ութասուն չորս րր. յիսուն կօպ.։ Աակայն այս բոլոր նիւթերը ոչինչ չեն տալիս, եթէ նըրանց վրայ գործ չը զնես բանող ձեռքեր։ Այդ պատճառով գործարանատէրը վարձում է հարիւր երեսուն հինգ բանւոր (նրանցից ամեն մէկը հսկում է եօթանասուն չորս իլիկ) և վճարում է նրանց բանող ոյժի համար այն քան, որքան հարկաւոր է աշխատաւորի ապրուսով հոգալու համար (կերակրի, հագուսի, բնակարանի համար) ասենք թէ երկու բր. քսան չինգ կօպ. շաբաթական բոլոր բանւորներին, ուրեմն, շաբաթական կը տրվէ երեք հարիւր երեք րր. և եօթանասուն հինգ կօպ.։ Եթէ բան

ւորներն աշխատէին միայն իրենց համար, այսինքն եթէ նրանք ասյին գործարանատէրին նոյնքան աշխատանք, որքան նրանք ստացել են նրանից բանորդական վճար, այն ժամանակ չտու հեշտ կը լինէր հաշւել թէ որքան պէտք է արժենայ՝ մի շաբաթվայ ընթացքում նրանց արդինագործած տասը հազար գրվանքա մանվածքը: Եւ յի բաւի այդ մանվածքի մէջ սէտք է պարունակվեն առամբակի արժեքը — երկու հազար վաթուն եօթ րբ., թ. մերենաների արժեքը — հարիւր քսան րբ., գ. քարէ ածխի արժեքը — քսան չորս րբ. վաթուն կօպ., գ. իւղի արժեքը — քսան չորս րբ. վաթուն կօպ., ե. գաղի արժեքը — վեց րբ., զ. զործարանի շնորի վարձը — երեսուն վեց րբ., է. բանորդների վարձը — երեք հարիւր երեք րբ. եօթանատուն հինգ կօպ., ընդամենը կանէ երկու հազար հինգ հարիւր ութուն եօթ րբ. յիսուն կօպ., ուստի մի գրվանքան կարծենայ տասը հազար մանգամ պակաս կամ մօտաւորագես քսան և վեց կօպ.:

Մինչդեռ մեր գործարանատէրը մի գրվանքա մանվածքի համար կստանայ ոչ թէ քսան և վեց կօպ., այլ երեսուն մէկ և հինգ ութերրորդ կօպ., իսկ տասը հազար գրվածքի համար տասը հազար անգամ աւելի — երեք հազար հարիւր վաթուն երկու րբ. յիսուն կօպ., այսինքն հինգ հարիւր եօթանատուն հինգ րուրլով աւելի, քսան մենք հաշւելու:

Եթէ մեր գործարանատէրը ստացել է հինգ հարիւր եօթանատուն հինգ րուրլով աւելի, ակներեւ է, թէ դրա պատճառն այն է որ նրանց մէջ պարունակվում է մի նոր

արժեք, որը առաջշը կար, բայց որը բանորդներն աւելացրին իրենց շը վճարված աշխատանքով: Այսպէս մենք տեսնում ենք, որ հինգ հարիւր եօթանատուն հինգ րբ. եկամուտը գոյացած է շը վճարված աշխատանքից, բանորդների ձեռքով ստեղծված յաւելեալ արժեքից: Այդ բանորդները շաբաթական աշխատանքի համար գործարանատէրից ստացել են երեք հարիւր երեք րբ. եօթանատուն հինգ կօպ., բայց այդ մի շաբաթում նրանք ոչ միայն իրենց աշխատանքով փոխանակել են իրենց վճարը, այլ և աւելացրել են բամբակի վրայ հինգ հարիւր եօթանատուն հինգ հինգ կօպ. շը վճարված աշխատանք: Նրանցից ամեն մէկը օրական ստանում է երեսուն եօթ և կէս կօպ., և ոչ միայն վերադարձնում է այդ վճարը, իր աշխատանքով բամբակացնելով բամբակի արժեքը, այլև աւելացնում է նրա վրայ մի նոր արժեք (յաւելեալ արժեք) յիսուն ութ և կէս կօպ.: Հետեւ արար, շը վճարված աշխատանքը տեսում է մէկ ու կէս անգամ աւելի երկար միջոց, քան վճարվածը: Բանորդը գործարանատէրի համար մէկ ու կէս անգամ աւելի է աշխատաւմ, քան իրեն համար:

Յաւելեալ արժեքը մէկ ու կէս \* անգամ աւելի է վճար

\* ) Ուրեմն յաւելեալ արժեքի շափը կազմում է այն յարաբերութիւնը, որ ունեն շը վճարված ու վճարված աշխատանքները իրար մէջ: Այսպէս, եթէ աշխատանքը բանում է իր համար չորս ժամ, իսկ ութ ժամ գործարանատէրի համար, այն ժամանակ շը վճարված աշխատանքը բարկու անգամ աւելի կը լինի վճարվածից և յաւելեալ արժեքի շափը կհաւասարէ երկուսի, կամ երկու հարիւր տոկոսի: Եթէ նաև վեց ժամ բանում է իրեն և վեց ժամ

ված աշխատանքից կամ ինչպէս ասում են, յաւելեալ արժեքի չափն է մէկ ու կէս կամ չարփւր յիսուն տոկոս:

Այժմ, կարծեմ, որ ես ձեզ կատարելապէս համոզեցի, թէ ամեն մի եկամուռ ու շահ չէ ստացվում սեփական աշխատանքից գոճէ մննք տեսանք, որ զործարանատէրն իր եկամուռը ստանում է ո՛չ թէ իր, այլ ուրիշ աշխատանքից:

Իսկ արհեստանոցների վարպետները, կալուածատերերը, պաշտօնեաները, վաճառականները և այլն. ի՞նչ կարելի է ասել նրանց եկամուր մասին:

Եամեն առաջ ոկտենք արհեստանոցների վարպետներից: Դուք անշուշտ գիտէք, որ մեղմօտ ստանամանների մեծ մասը սպառաբասում մասնաւոր արհեստանոցներում, որտեղ վարպետը հսկում է զործի վրայ, քեարգեսրները — խալ-Փա — աշխատում են վճարով, իսկ աշկերտները մըրի: Որ վարպետը օգուտ է առնում աշկերտների աշխատութիւնից և դրանից ստանում է շահ, զրա մասին գիտեն մինչեւ ան գամ փոքրիկ երեխանները: Այստեղ մննք կը խօսենք մի, այն քեարգեալների վճարված աշխատութեան մասին:

Դուք զիտէք թէ ինչպէս զժուար է կօշկակարի աշխատանքը: Մէջքը ծառծ նստած իր նստարանի վրայ, լսեց զիշ մութ սենեակում, նա ալէտք է աշխատէ օրական տառնը հինգ, տասնը կեց ժամ, որ կարողանայ ձեռք բերել միայն իր ասլուսատը հոգալու միջոցը: Նրան վճարում զործարանատէրի համար, այն ժամանակ յաւելեալ արժէ քիչ չափը կը լինի մէկ, կամ չարփւր տոկոս:

Են հատով մի զոյգ կօշկի համար իննսուն կօպէկ: Բարեյաջող հանգամանքներում՝ լաւ քեարգեարը կարող է պատրաստել ատան հինգ ժամում երկու զոյգ կօշիկ և կստանայ իր աշխատանքի համար մէկ րբ: ութսուն կօպէ Տեսնենք այժմ ո՞րտեղից է գոյանում վարպետի եկամուռը:

Մի զոյգ կօշիկ կարելու համար կը զնայ երկու րբ: տասը կօպէկից մինչեւ երկու րբ: յիսուն հինգ կօպէկի կաշի, րետին՝ լաստիկ, տակեր, իսկ միւս նիւթերը (թել ասեղ, գամեր և այլն) տասը կօպ., արհեստանոցը զիցուք — տասը կօպ. \*) , քեարգեարի աշխատանքին իննսուն կօպ: Եթէ մեր քեարգեարը ստանար իր աշխատանքի համար այնչափ, որչափ հարկն է, այն ժամանակ մի զոյգ կօշիկ իր մէջ պէտք է պարունակէր՝ ա. նիւթի արժէք (կաշի, ըետին, տակեր) երկու րբ: յիսուն հինգ կօպ., միւս նիւթերի արժէք՝ տասը կօպ., արհեստանոցի վարձը՝ տասը կօպ., քեարգեարի աշխատանքի արժէք՝ իննսուն կօպ., այնպէս որ կօշիկները պէտք է արժենային երեք րբ: վաթսուն հինգ կօպ.: Մինչդեռ վարպետը ծախում է մի զոյգ կօշիկը հինգ րբ., այսմիքն մէկ րբ: երեսուն հինգ կօպէկ թանգ:

Ո՞րտեղից երեան եկաւ այս մէկ րբ: երեսուն հինգ

\*) Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ արհեստանոցի վարձն աւելի թանկ է, կարող է լինել ինն րբ: կամ տասն հինգ րբ: և աւելի, բայց այդ արհեստանոցում պատրաստ վում է ոչ թէ մի զոյգ կօշիկ, այլ ամսական յիսուն, հարփւր և աւելի, ուստի և ամեն մի զոյգի վրայ՝ իրեւ արհեստանոցի ծախուն ընկնում է աւելի քիչ ենթադրենք տասը կօպ:

կօսէ: Ի հարկէ նա չէ գտնվում ոչ տակերի, ոչ դամի, ոչ էլ արհեստանոցի մէջ, այդ նոր արժէքը կարող են ըստեղծել միայն աշխատաւորները:

Աչա այդպէս, մերքեարգեարըիր իննսուն կօսէկ վարձի համար, բացի վճարված աշխատանքից, աւելացրել է վարպետի համար մէկ րը, երեսուն հինգ կօսէկի չը վճարված աշխատանք, այսինքն յաւելեալ արժէք, որով ի հարկէ օգտվումէ միմիայն վարպետը. Ուրեմն գալձեալ չը վճարված աշխատանքը մէկ ու կէս անգամ աւելի է վը ճարվածից, գարձեալ յաւելեալ արժէքի չափն է՝ մէկ ու կէս կամ հարիւր յիսուն տոկս. բանւորը ամենօրեայ աշխատանքի տասն և հինգ ժամից աշխատում է իրեն համար միայն հինգ ժամ, իսկ տասը ժամը ձրիալէս տալիս է վարպետին, հարստացնելով նրան:

Հիմա զուք տեսնում էք, թէ ինչպէս է վարպետը ստանում իր եկամուտը. Որդիօք սեփակա՞ն աշխատանքով: Ի հարկէ՝ ոչ ձիգ այնպէս, ինչպէս և գործարանատէրը նա կարող է հարստանեալ միայն բանւորների և քեարգեարների աշխատանքով:

Դուք տեսնում էք հիմա, թէ ինչ հաւատի են արժանի այնպիսի մարդիկ, ինչպէս „ինքնօգնութիւն“ գրի հեղինակը, որ հրաշքներ են պատմում նեփական աշխատանքով վաստակած հարստութիւնների մասին. Դուք գիտէք հիմա որ դրանք անամօթ կերպով ստում են, երբ ասում են, թէ գործարանատէրերը սեփական աշխատանքով են ձեռք բերել իրենց հարստութիւնը:

Ե.

Իսկ վաճառականները, կալուածատէրերը, պաշտօնեաները և այլն :

Ոյս րօպէիս զրանդ էլ կը հասնենք: Եւ որպէս զի յուսարաններ մեզ թէ սրտեղից է գոյանում նրանց եկամուտը, ինչպիսի աշխատանքով են տարրում նրանք, վերցընենք մէկ օրինակ:

Գիցուք թէ որ և է գործարանատէր իր ձեռնարկած գործի վրայ դրել է հարիւր յիսուն հազար ըր: Թէ ինչ ձեռնարկութիւն է զա՞ մեզ համար ողջ մէկ է, ամենք թէ դա – շաքարի գործարան է: Մեր գործարանատէրը զնել է մերենաներ, ձակնդեղ և ուրիշ պէտքական նիւթեր, վարձել է բանեղորներ և մի տարաց յիսոյ ստացել է շաքարի համար հարիւր իննուն հինգ հազար ըր: Ոյդ պիտով գործարանատէրը ստանում է բառասուն հինգ հազար ըր, եկամուտ հարիւր յիսուն հազար կատիստալից: Մենք արդէն զիտենք, որ այդ բառասուն հինգ հազար ըր, ուրիշ բան չէ, եթէ ոչ բանւորների չը վճարված աշխատանքը, կամ թէ յաւելեալ արժէք:

Գործարանատէրն ուրախութեամբ կը սրահէր իր մօսայդ ամիսով եկամուտը, թէ և ինքը դրա համար ո՞չ մէկ աշխատանք չէ գործադրել բայց և այնպէս հեշտ բան չէ փողից բաժանվիլը:

Այլայն բացի նրանից զեռ շատեր կան, որ ուզում են օգտվել աշխատաւորներից պոկած այդ յաւելեալ արժէքից: Ոմենքը կուղենային թէկաւզ մի քիչ իրենց գրակա-

նը գցել, գէթ մի կաթիւի շափով օգտվել բանորի աշխատանքի բրտինքից: Ամենքից առաջ վաճառականն է մեկ նում իր ձեռքը: Գործարանատէրն առանց վաճառականի ոչինչ չէ կարող անել, որովհետև գիտէ որ ոչ մի օգուտ չի ստանալ իր ապրանքից, եթէ այդ ապրանքն ընկած կը լինի իր խանութում: Նախ հարկաւոր է ծախել ապրանքը, փոխանակել, վերածել նրան փողի, և միայն այդ ժամանակ նա կարող է առել թէ գործ է տեսել նշանակում է հարկաւոր է գոտնել վաճառականին, որին կարող կը լինի ծախել ապրանքը: Յայտնվում է վաճառականը. նա պատրաստ է գնել ապրանքը, բայց այն պայմանով որ ծախողն անէր մի բանի տոկոս զեղչ: Չը համաձայնվել այդ առաջարկութեան հետ գործարանատէրը չէ կարող և զեղչ անում նրան, ենթադրենք, տառը կօպ. ամեն, մի բուրբուց և ծախում իր չաքարը ոչ թէ հարիւր իննուուն հինգ հազար բր. + այլ միայն հարիւր թսուն եօթ հազար հինգ հարիւր բր. + Այդպիսով գործարանատէրի և կամուտը քիշացաւ և նրա մի մասը գնաց վաճառականի գրանք, բայց զրա փոխարէն գործարանատէրի գոր պանում հիմա կայ զուտ զրամ: Իսկ վաճառականն այդ հաշւից ստացաւ եօթ հազար հինգ հարիւր բր. + Ի՞նչպէս ստացաւ նա այդ եկամուտը: Անփակա՞ն աշխատանքով արդեօք: Ի հարկէ — ոչ Այդ եկամուտը գործարանատէրի եկամուի լոկ մի մասն է: Եւ ուրիմն վաճառականն ապրում է ուրիշի աշխատանքով: Գործարանական բանոր ների աշխատանքով:

Վաճառականի ետևից գտիս է կալուածատէրը: Մեր

գործարանատէրն իր գործարանը կառուցել է կալուածատէրի հողի վրայ:

Ճիշդ է, պատահում է, որ գործարանը կառուցումն ավաստ հողի վրայ, բայց ստէպ նաև — ուրիշի հողի վրայ: Հողատէրն ուղարկէ դրա համար ստանալ վճար, որ կոչվում է րէնտ (հասոյթ հողից): Ինչ կարող ես անել, մտածում է ինքն իրեն գործարանատէրը եթէ հարկաւոր է վճարել ուրիմն վճարիր Եւ իր քաղած շահից նա տալիս է երեք հազար բր. + րէնտ:

Այսպէս ուրիմն որտեղից է գոյանում կալուածատէրի եկամուտը: Ակնյայտնի է, որ զարձեալ գործարանատէրի եկամարց, նշանակում է էլի՛ գործարանական բանուորների շը վճարված աշխատանքից: \*)

Հիմա մեր գործարանատէրի մօտ մնաց միայն երեսուն չորս հազար հինգ հարիւր բր. + շահ, բայց այժմ էլ նա չէ կարող այդ զումարն ամերողչապէս զնել իր զրպանը Մենք արդէն ասացինք, որ գործարանի պարագաները ձեռք բերելու համար նա ծախսել է հարիւր յիսուն հազար բր. + Այդ զումարը կարիլի է որ իր սեփականն է, բայց կարող է լինել որ փոխ է առել ուրիշից: Չէ՞ որ շատ կան հարուստ մարդիկ, որ փոխանակ որ և է ձեռնորդիներով պարագալլու, իրենց փողը տալիս են ուրի-

\*) Մենք խօսում ենք այստեղ այնպիսի հողատէրի մասին, որ չունի իր սեփական տնաեսութիւնը: Խակ այն հողատէրը, որ ինքն է վարում իր տնտեսութիւնը, ապրում է զարձեալ բանուորների աշխատանքով: Բայց իր սեփական բանուորների, այսինքն վարձվորների աշխատանքով, գերկողների, հնձողների և այլն:

առավարութիւնները զրկում են իրենց գործերին և սպառնում են պատերազմով եթէ չը կառարին իրենց գործութանատերերի պահանջները։ Խոկ երբ բանւորները սկսում են շարժվել, երբ նրանք իրենց իրաւոնքները պաշտպանելու համար բարձրացնում են իրենց ձայնը և վաճառու կաններից ու զարձարանատերերից արդարաթիւնը մինչև ան չանչում, այն ժամանակ կառավարութիւնը մինչև ան գումարանումէ պատերազմ՝ ձագեցներ, միացն թէ ի դեն աջաղվէ երկրից հեռացնել և անհանգիստ զրոխները։ Հետեարար զոր անսում էր, թէ կառավարութիւնը սրպիսի մեծ ձաւացնութիւններ է անում հարուստներին և զորձարանատերերին Բայց զայտ բառական չէ, ում համար է նա բանում համալսարաններ, կարգաւորում, բաւանում քաղաքները, կառուցանում թատրոններ։ Ար գեօթ ազբաններից համար։ Յա ո՛չ Ազքանները չեն կարու իրենց երախտներին ուղարկել ուսումնարան և ժամանակ չունեն թատրոնի մասին մատելու։ Այդ բոլորը միասին թէ՛ կառավարութիւնը, թէ՛ սատիկանութիւնը, թէ՛ շարքը, թէ՛ թատրոնը, այդ բոլորը զբութիւն ունեն հարուստների, և աղաներից համար։ Այդ բոլորի համար կառավարութեանը ովէտք է շատ փող, որ հաւարփում է առորքերից Աբքանի փող է զեռում զօրքի վրայ։ Խոկ սա ամիկանութեանը վրաց, խոկ հազարանոր պաշտօնեանների վրայ՝ մեծ, փոքր ու ամենափոքր, խոկ մինիսարների, թագաւորների, թագուհիների, թագուորի զոտարների և սատանան զիտ թէ՛ զարձե ալորի վրայ։

Ամենից շատ տուրք վճարում են նայն իրենք ազքանոց

չին և տարեկան ստացած տոկոսներն աւելացնում իրենց կապիտալի վրայ։ Հենց այդպիսի մի կ ապիտութիւնի մատ կարող էր զրամ փոխ առնել մեր զործարանութերը։ Դիցուր թէ կապիտալիսաք տվել է նրան ամրող հարկա որ զումարը հարիւր յիսուն հազար ըր, և վեց տոկոսով։ Այդ գետպում զործարանատերն իր եկամտից կը առաջ նը բան ինը հազար ըր, առկուս իրեն կը մնայ միայն քանակը հազար հազար ըր։ Խոկ կապիտալիսաք ուրիշի գրանից իր զրամանից ինը հազար ըր, և վայց որի զրամանից թվում է, թէ զործարանատերն իր զրամանից սակայն խսկալու այդ զումարն էլ վերցրել են բանուորներից, սրանց չը վճարփած աշխատանքից։

Արեմն զործարանատերի մատ մնամ է բան հինգ հազար հազար ըրից հարիւր ըր, բայց և այդ մնացարզով նաև չէ կարող իր կամքի համեմատ վարչեր Կառավարութիւնն էլ է ու զում ասանալ իր մասն այդ օպտից։ Եւ նոտ իրաւոնք անիւ Կառավարութիւնը չենց նրա համար էլ զոյութիւն անիւ որ հարուստներին պաշտպանել, և աղքատներին ձեւէ։ Խա սավարութիւնն անիւ զօրք ու սատիկանութիւն միայն նրա համար, որ աղքատներին ննապանդ ու խսնարչ պատէ։ Երբ բանւորները հաւարփում են, պայմանաւորփում են և պահպանամում են, որ զործարանատերն աւելացնէ, աշխատանքի վարձը, կառավարութիւնն անմիջապէս ուղար կում է զօրք ու ժանգարմներ և խսովարարներին։ զսպե ու համուր Արք երկու երկրի զործարանատերերը մի մատմ այն բանի մասին, թէ իրենցից ո՞րը պէտք է ապա մանք ներսում է մի երրորդ երկրում այդ ժամանակի կա

բը, բանւորները։ Յայց վորք ինչ տալիս են նաև գործարա  
նատէրերն ու կապիտալիստները։ դրանցից ամեն մէ  
կըն իր պարտականութիւնն է համարում ստակ վճարել  
կառավարութեան, իբրև իրենց ծառային։ Եւ մեր գործա  
րանատէրն էլ իր եկամտից մի բան մի կողմէ դնում կա  
ռավարութեան համար։ Ենթազրենք, տուրքով նու տալիս  
է նրան հինգ հարիւր րը։ Դիւրին է հասկանալ, որ այդ  
տուրքն էլ վճարելն բանւորները, որովհետեւ ո՛չ մի գոր  
ծարանատէր ինքը ոչինչ չունի, այլ բաժանումէ միայն  
յաւելիալ արժէքը, աշխատաւորի չը վճար  
ված աշխատանքը։ Մեր գործարանատէրի ձեռքը մը  
նում է քսան հինգ հազար րը։ Դրանցից եօթ հարիւր  
յիսուն րը։ գործարանի տեսչի վարձն է, հազար հինգ  
հարիւր՝ ատահովագրական ընկերութեան, և երկու հա-  
զար երկու հարիւր յիսուն րը։ գործարանի այլ և այլ  
պաշտօնեաներին Անում է քսան հազար հինգ հարիւր րը։  
գուռ եկամուտ, որ գործարանատէրն ինչ ուղումէ անում  
է։ Եւ ամենով աշխարհը կատէ, թէ այդ քսան հազար  
հինգ հարիւր րը։ գործարանատէրի սեփականութիւնն է,  
թէ նա այդ գուռարը ձեռք է րերել սեփական աշ-  
խատանքով։

Գործարանատէրն էլ հօ վոզին էլ վոզ չի ասիլ Նաւար  
զէն չի սկսիլ հաջիւ տեսնել թէ իր գոյութիւնը պահպա-  
նելու համար ո՛րքան է իրեն հարկաւոր, ինչպէս անում է  
աշխատաւորի վերաբերութեամբ, այլ կապրէ ու կը մսիէ  
այդ վոզը, որպէս իրքէֆն է տալիս։ Թատրօններ, պարու  
հանդէսներ, շամպանեա գիմի, կառքեր, փարթամութիւն

տան մէջ, փարթամութիւն ճաշի սեղանի վրայ։ Ապրել ին  
չու չէ, կարելի է, որովհետեւ իր գրանումն է բանւորի չը վը  
ճարված աշխատանքը։ Զը վճարված աշխատանքը բաւակա  
նութիւնն է տալիս ամեն բանի. նրանով կապրեն նաև գոր  
ծարանատէրի սպասաւորները, նրա պահած կիները, ծա  
ռաները և այլն. Խակ այն վոզը, որ կը մնայ նրա բոլոր  
քէֆերին ու պահանջներին բաւականութիւն տալուց յե  
տոյ — այդ վոզը գործարանատէրը կաւելացնէ իր կուտա  
կած հաղարների վրայ, որպէս զի վարձէ աւելի մեծ թւով  
աշխատաւորներ՝ որ աւելի շատ օգտվէ ուրիշի աշխատան  
քով, հարստանայ ուրիշի յաւելիալ արժէքով։

## 9.

Այժմ մենք կարող ենք լիուլի պատասխան տալ այն  
հարցին, որ այս զրքի սկզբներում արվեցաւ և որ նրա  
վերնազիրն է։

Ով ինչո՞վ է ապրում։ Ո՞վ իր և ո՞վ ուրիշի աշխատան  
քով։ Ով ինչո՞վ է իրեն պահում, ի՞ր թէ ուրիշի ձեռքերի  
աշխատանքով։

Այժմ բոլոր մարդերին մենք կարող ենք բաժանել ե-  
րեք կարգի վրայ։

Առաջին կարգին պատկանում են այն մարդիկը, որ  
աշխատում են իրենց համար և իրենց պահում են սեփա-  
կան աշխատանքով. զրան են պատկանում այն ամեն ար  
հեստաւորները, որոնք ունեն արդիւնաբերութեան սեփա-  
կան գործիքներ և այն ամեն զիւզացիները, որոնք ունեն

այնշատի հոդ, որ կարող են դոյսոթիւն անենալ իրենց աշխատանքով:

Եթէրորդ կարգ: Գտ բանուորներն են, որոնք չունեն արդիւնագործութեան սեփական զործիքներ և այն զիւղացիները, որ ունեն կամ շատ փաքր հոզ և կամ բոլորովին զուրկ են հոզից, և որ հարկագրված են ծախել իրենք իրենց ծախել իրենց բանոց ոյժը: Այս կարգից ենք մէնք համարում բոլոր քեարգեաբներին, զործարանական բանուորներին, վարձգորներին և այլն, և այլն:

Իսկ երրորդ կարգը կազմում են նրանք, որ ունեն արդիւնագործութեան զործիքներ, բայց որ իրենք չեն բանում չեն աշխատում: այլ սախալում են բանել ուրիշներին:

Որանք իրենք իրենց համար չեն աշխատում: այլթէ՛ պահում են իրենց և թէ՛ հարատանում ուրիշ աշխատանքով, յաւելեալ արժեքով: որ խոել են ուրիշներից: Այդ կարգին են պատկանում զործարանատէրերը, արէհասատնոցի վարպետները, կալուածատէրերը, վաճառականները, ոսափ կանութիւնը, զօրքը, մինիստրները և շատերը պաշտօնեալ ներից:

Իսկ այժմ կը հարցնեմ ձեզնից -- արդեօք գտ արդարութիւն է, արդարութիւն է արդեօք այդպիսի բաժանումը մի կողմից անգործ հարուստներ և միւս կողմից աշխատաւոր ազքատներու: Այս թէ ուշ

Մեր գլոբոցի առաջին մասում մենք արդէն տեսանքք թէ ներկայ կարգերն ինչպէս են: մէկ ամի մարդիկ ապրում և քէֆ են անում ամրազջ ժողովրդի աշխատանքի հաշում: Բայց ինչո՞ւ է գտ այդպէս:

Արավիշեակ ժողովրդային այդ ընդհանրութիւնն աղատչէ, որովհեակ նա պարաւարված է ծախել իր բանու ոյժը, ծախել իրեն:

Բայց ինչո՞ւ է նա պարաւարված ծախել ինքն իրեն, Արավիշեակ շանի աշխատանքի զործիքները: Իսկ մենք որ դէն տեսանքը որ նա, ով չունի աշխատանքի զործիքներ, ոկտր է իրեն ծախել, այլտպէս նա կը մեռնէ քաղցից:

Հասեալիս, եթէ ուզում ենք ուզգել բարեկարգել, բարեփոխել այժմեան կարգերը, եթէ ուզում ենք վերացնել մի մասի աղքատութիւնը և միւս մասի փարթամութիւնը, այն ժամանակ ի՞նչ պէտք է անենք:

Ոկնյացանի էր որ պէտք է այնպէս կարգաւորել որ աշխատանքի զործիքները լինեն սեփական ամեն, մէկին:

Այն ժամանակ ամեն, մէկը կաշխատէ իրեն համար: Ոչ ոք չի աշխատիլ ուրիշների համար, ոչ որ ուրիշին չի տալ յաւելեալ արժեքը իր աշխատանքից: Այն ժամանակ ոչ ոք չի գնիլ մարդիկներին ու սրանց բանուղ ոյժը, ոչ ոք չի խլիլ յաւելեալ արժեքը, ոչ ոք չէ կարող հարստանակ ուրիշի աշխատանքով, ոչ ոք չի ապրիլ ուրիշի աշխատանքով:

— Այնպէս կարգաւորել որ ամեն մէկն ունենայ աշխատանքի զործիքներու Բայց ի՞նչ ալ է ո կարգաւորել այդ, Դրանումն է խնդիրը — Կը նկատէք զուրք ինձ:

— Ի՞նչպէս կարգաւորել Շատ պարզ կերպով, աշխատանքի զործիքներն առնել այն մարդկանց ձեռքից, որոնք չատ ունեն այդ զործիքներից և տալ աշխատաւոր բաղմութեան զործածելու:

Առնել այժո՞վ... Բայց ի՞նչ էք ասում, ի՞նչպէս թէ առնել Միթէ դա կարելի՞՞ է, Միթէ դա խելքի՞՞ բան է, Միթէ դա բարոյական բան է:

— Կարելի է արդեօք, խելքի բան է արդեօք, բարոյական է արդեօք — ահա այն երեք հարցերը, որոնց այժմ կաշխատենք տալ պատասխան:

## Ա.

Նախ տեսնենք թէ կարելի՞ է արդեօք:

Կարելի՞ է արդեօք, որ իւրաքանչիւր աշխատաւոր, իւրաքանչիւր մարդ ինքն ունենայ աշխատանքի զործիքներ:

Դա այնքան էլ սրարդ հարց չէ, որքան կարող է թըլվալ Առաջին հայեացքից թվում է, թէ դա դժուար բան չէ, Զէ՞ որ մի ժամանակ այնպէս էր, որ գրեթէ իւրաքանչիւր աշխատաւոր ունէր իր սեփական արհեստանոցը, որտեղ ինքն էր տէրը:

Հին ժամանակները — յիրաւի այդպէս էր: Բայց այն ժամանակ աշխարհում համեմատարար քիչ մարդ կար, Այն բաղաքում, ուր երկու հարցերը միլիոն էին:

Հինգ հարիւր հաղար բնակիչը այժմ չօրս միլիոն է (Լոնդոնը Անգլիայում): այն երկիրը, ուր երկու երեք հարիւր տարի առաջ կար երկու միլիոն բնակիչ, այժմ թերես տասն և աւելի միլիոն է. ուր առաջ տասն հազար զոյգ կօշիկ բաւականանում էր ամենքի համար, այժմ հարկաւոր է միլիոն, ուր առաջ զործածվում էր մի միլիոն արշին (չափ) կտաւ, այժմ պահանջվում է տասն և քսան անգույն աւելի:

Հետեաբար, հին ժամանակները, այդ Հին երանի ժամանակները՝ — թէ նա բոլորովին այնչափ լաւ չէր, որ ցանկանք նրա վերադարձը, — կտաւազարծը, որ արհեստանոցում բանում էր կնոջ ու երախաների հետ, կամ փականագործը, որ պատրաստում էր կղզակներ իր մօտ տանը, չէին կարող շատ շնել թէ՛ կտաւ, թէ՛ կդպակ: Բանում էին քիչ, որովհետեւ պահանջն էլ մեծ չէր, կտաւ զործը մանում էր իր կտաւը վատ դաղքեահի վրայ, վականագործը մինում էր իր կղզանկները վատ զործիքների միջոցով:

Հիմա կտաւազործը կտաւն անպատճառ պէտք է մանէ մեքենայի միջոցով Եթէ ուզենար նա մանել կտաւը դաղքեահի վրայ, զա նման կը ըներ այն բանին, ինչպէս եթէ մէկը ցանկանար ձիով երթալ այնտեղ, զէափ ուր շնված կայ երկաթուղի Նա թերես ստիգմած լինէր կորցնել հարիւր ժամ այն բանի վրայ, ինչ մեքենայի մի ջցով կը աւատրաստէր մի ժամում:

Կերկայումն պահանջվում է շատ, շատ արդիւնաբերութիւն: Անհրաժեշտ են մեծ զործարաններ, չողիէ մեքենա-

ներ, մեծ խանութներ, որ արտադրվել արդիւնարերութեան անհրաժեշտ քանակութիւն։ Ներկայումս՝ օրինակ՝ միակ Անգլիայում չ'ըրի յիշուն հազար տիտան եօթը բանուրներ մանում են բամբակ երեսուն երեք միլիոն ճա խարակի վրաց ։ Եթէ իւրաքանչիւր աշխատաւոր տնեն նար իր սեփական արհեստանոցը, իր ճախտարակը, այս ինքն եթէ իւրաքանչիւրը լիներ ինքնուրացն աշխատաւոր, նրանք այն ժամանակ չեն կարող պատրաստել և քան ներորդ մասն այնչափ, որշափ արդիւնարերում են այժմ։ Ամեն տեղ բամբակի պակասութիւն կը զգացվեր և մինչև անգամ մեր գեղջկուհները կը սկսէին զանգառավել այդ պիսի կարգերից։

Դուք այսու տեսնում եք, որ այնքան էլ չեցո չէ և միշտ էլ կարելի չէ, որ իւրաքանչիւրն ունենար իր սեփական արհեստանոցը, աշխատանքի իր սեփական գործիքները ձից եւ որ չեր լինի ճնշում բանուրների վրաց բացց ամեն տեղ ամենաանհրաժեշտ ապրանքների պակասութիւն կը լիներ, ևը լիներ ապրանքութիւն և մինչև իսկ առվ։

Ոյս՛ սովորակես զուք ինքներդ հիմա կը համոզվեր ։ Ներկայաւմս՝ օրինակ՝ Անգլիայում, զրեթէ ըը կայ աշխատաւոր, որն ունենաց աշխատանքի սեփական գործիքներ։ Խակ այնպիսի զիւզացիներ, որ մշակէին իրենց սեփական չողքը, ամենին ըը կայ։ Ոյնտեղ կան միացն մեծ հազարեր, որնք ունեն աշխատի կարուածներ, չողիւ զութան ներ, չողիւ մերենաներ ցորենը ծեծելու և համարի ներանք իրենց զաշտերի մշակութեան համար վարձում

### Են զիւզական աշխատաւորներին։

Խակ զիւզական աշխատաւորները ոչինչ չունեն — ոչ զաշտեր, ոչ բասարներ, ոչ աշխատանքի զործիքներ, ոչ էլ մինչև անգամ խրճիթ։ Նրանք հանեապէս պարտաւոր ված են ծախուել իրենց զանալ տերերի ստրուկները և տալ նրանց իրենց չը կնորված աշխատանքը։

Ոյցտիսի աշխատաւորների վիճակը վատ է, չա՛տ վատ։ Աներեալայիլի սարսափ է ազգում անզլիական հո զատերերի ընչափացութիւնն ու գաղտնաբարոց վարժունքը երր զրբերում կարգում ես անզլիացի զիւզական աշխատաւորների թշտառ զրութեան նկարազրութիւնը։

Բայց ինչու՞ն էր կարծում, արցեօք տեկի լա՞ կը լի ներ, եթէ նրանցից իւրաքանչիւրն արվել մէկ տանձին փորբիկ կոտր հոգ։ Արզեօք որ և է բան կը վաստակէր զրոնից անզլիացի ժողովուրդը։ Ամենին ոչ 1875 թ., Անգլիան ունար ուներ քան և երկու միլիոն կվարտեր<sup>4)</sup> հացին խակ անզլիական հողը առիս է միոյն տան երեք միլիոն կվարտեր հաց, այնպէս որ ինն միլիոնը պիտի է ըրեւել արտասահմանից։ Եթէ հոգը բաժան, ված լիներ մանր մաների, սրանց վրաց չեր կարելի զործածել ոչ չողիւ զութաներ, ոչ ցորենը ծեծելու, ոչ ցանելու, մերենաներ, ոչ էլ մերենայի մազ, այն ժամանակ ոչ միոյն չեր հաւաքիլ տան երեք միլիոն, այդ և զացէ մինչև անդամ չինդ վեց կվարտեր չը ճակովէլլը։ Ոյս

<sup>4)</sup> Կվարտերը հաւաքար է 75 զարնցի, իսկ մի զարնցը հաւաքար է 3280 զրամի։

Ժ Ա Յ Ա Տ Վ Ա Ր Ա Յ Ո Ւ Մ կը տիրէր սովը:

Դուք տեսնում եք ուրեմն, որ ներկայումս իւրաքանչիւրին անկարելի է աշխատանքի գործիքներն ունենալ իրեն սեփական:

Բայց ինչպէ՞ս անել Եթէ ամեն մէկը աշխատանքի գործիքներ չունի իրեն սեփական — զա վատ է, որովհետեւ պարտաւորդնումէ վաճառել իր բանով ոյժը ծախել իրեն, հարստացնել ուրիշներին, ունենալ աշխատանքի գործիքներըն իրեւ սեփականութիւն — դարձեալ վատ է, որովհետեւ այն ժամանակ կը տիրէ աղքատութիւն, սովէ ի՞նչ անել ուրեմն: Որտեղ գտնել եքքը:

Եւք կայ և շատ լւաւ ելք: Ինչու հէնց այնպէս չանել այժմ էլ ինչպէս առաջ էր: Որտեղ աշխատաւորները բանում են միստին մեծ գործարաններում և խոզը հողակը տորների վրայ, այնտեղ թող այսուհետեւ բանեն միստին ընդհանուր կերպով: Սակայն պէտք չէ որ նրանք միմեանց մէջ բաժանեն ո՛չ աշխատանքի գործիքները, ո՛չ էլ հողը: Թող ամբողջ գործարանները պատկանեն աշխատաւորներին և նրանցից ո՛չ թէ մէկին, այլ ամենքին: Թող բոլոր գործարանները և ամբողջ հողը պատկան են բոլոր աշխատաւորներին, բոլոր գիւղացիներին (այսինքն տէ բունական) սեփականութիւն: Թող նրանք աշխատեն ընդհանուր կերպով: Բայց ո՛չ գործարաննատէրերի համար, այլ իրենց համար: Այն ժամանակ կարդիւնարերին ո՛չ միայն քիչ այլ և շատ աւելի, բան այժմ: Իւրա

անշխարը կիմանայ, որ աշխատումէ ոչ թէ անգործ գործ ծարանատէրի համար, այլ իր ընկերների համար, որոնք էլ նոյնպէս աշխատում են նրա համար:

Այն ժամանակ աշխատաւորը կը հասկանայ թէ՝ եթէ ինքը գործարանում բանէ աւելի երկար ժամանակ, քան հարկաւոր է — ողջ մէկ է յաւելեալ աշխատանքը, յաւելեալ արժէքը կը ծառայէ ամենքին և ո՛չ թէ մէկ ափ մարդկանց հարստանալուն, կը բարելաւէ ամենքին իւրաքանչիւրի վիճակը:

Այսպէս ուրեմն, աշխատաւորների ճարը տեսնել կարող է միայն այն զրութիւնը, երբ հողն ու գործարանները կը լինեն հասարակական սեփականութիւն: Հնարաւոր է ար դեօր, որ իւրաքանչիւրը լինի իր տէրը:

### Բ.

Խակ այժմ հարցնենք մեղնից, թէ կաջողվէ՞ զա արդեօր: Կարելի՞ յուսակ թէ խսկալէս կարող է իրականանալ այն զրութիւնը, որ հողը և աշխատանքի գործիքները լինեն ընդհանուրի սեփականութիւն: Հնարաւոր է ար դեօր, որ իւրաքանչիւրը լինի իր տէրը:

Միշտ եղել են աղքատներ ու հարաւաներ, միշտ և ամեն տեղ եղել են մեծարքանակ մնչված մարդիկ և մէկ ափ մնչողներ: Միշտ ել եղել են մարդիկ, որ այդպիսի կարգերը համարել են անարդար, բայց և այնպէս հօ ոչինչ չօգնեց — միշտ աղքատների վիճակն էր վատ և հարուստ ներինը լոււ:

իսկ այժմ՝ միթէ աղքատների թիւը չէ աւելանում օրից օր, միթէ սոսկալի աղքատութիւնը չէ տիրում ամեն երկիրների բանուրների մէջ միթէ պարագաների (օտարակեր), անգործների փայտամութիւնն ու կամայականութիւնը չէ անում իրաքանչիւր ժամ:

Այդ բոլոր ճիշդ է, չառ ճիշդ, բայց և այնպէս զա չէ կարող մեզ զրկել յայսից քնդհակառակն, նոյն իսկ զրբանից մենք կը տեսնենք, որ մօմ է ներկայ կարգերի փոխանքը: Բանն ահա ինչումն է:

Այն աղքատների թիւը, որ չանեն ո՛չ մի սեփականութիւն, անդադար աւելանում է և կը չարունակվի աւելանալ: Այժմեան կարգերի գոյութեամբ զրա դէմ ոչինչ չես կարող անել: Արդհեատաւորն իր ապրանքն ուզարկելով չափ չափայ ոգում է ստանալ նրա համար որքան կարելի է չառ, և դա զարմանալի չէ նա աշխատանք է զոր ծաղրել նրա վրայ այնչափ, որչափ կարողացել է: Բայց ի՞նչ օգտատ իրեն իր այդ ախտանիքից: Գործարանաէք ըր, որ գործարանում պարասաւում է նոյն ապրանքը, զրա համար զարձագրում է անհամեմատ աւելի քիչ աշխատանիք<sup>\*</sup>): Եթէ մենք ընդունենք, որ փականազործը մի կզարակ չինելու համար կը գործածէ երեք յամ, այն յամանակ նոյնուիսի մի կդպակ զարձարանում կը չինվէ մի յամում, այլ և աւելի չառ: Փականազործը կը ցանկայ ոտանալ իր չինած կզարակի համար երեսուն կոստ:

\* ) Ի հարկէ, ո՛չ իր այլ այստեղ խօսքը նրա վարձված բանուրների աշխատանիքի մասին է:

Ժամ՝ աշխատանիքն արժէ տասն կոպէկ), մինչդեռ գործարանատէրը կը վաճառէ տասն կոպէկով: Ի հարկէ, ոչ ոք կդպակ չի առնիլ փականագործից և սա, միջոց չունե նալով վաճառելու իր ապրանքները, կը ծախէ իր դագգեահը և կերթայ կը ծախէ գործարանատէրին իր բանով ոյժը:

Ինչ որ ասացինք փականագործի մասին, նոյնը կարող ենք ասել և միւս արհեստաւորների վերաբերութեամբ: Մեքենաների ու գործարանների հետ մրցել նրանք չեն կարող և ուշ կամ վաղ ստիպված են գառնալ վարձվոր բան ւորներ: Ահա այս կերպով մարդկանց աւելի ու աւելի մեծ մասը զրկվումէ իր աղքատութիւնից և ակամայ վաճառում է իր բանով ուժը:

Եթէ բանուրներն ունենային գէթ մի մշտական, յարատել վճար, որի վրայ կարողանային յոյս գնել այն ժամանակ գուցէ նրանց կարելի լինէր մի կերպ ապրել աշխարհում: Բայց բոլորովին այդպէս չէ: Բանւորի վճարը, ընդհակառակն, իջնում է և պէտք է իջնէ շարունակ, մինչդեռ գործարանատէրի շահը միշտ աւելանում ու մեծանում է:

Աշխատենք բացատրել այդ աւելի հասկանալի կերպով: Մտաբերենք թէ գործարանատէրը որտեղից է ձեռք բերում իր շահը: — աշխատաւորը տալիս է նրան իր ըլ վճար ված (յաւելեալ) աշխատանիքը, որով հետեւ բանւորն օրվայ միայն մի մասն է աշխատում իրեն համար, իսկ մնացած ժամանակն աշխատումէ գործարանատէրի համար: Եթէ՝ օրինակ՝ գործարանատէրն ունի

քսան բանւոր, որոնցից իւրաքանչիւրին վճարումէ իննը-սուն կօպէկ օրական, նա վճարում է այդքան հէնց այն պատճառով, որ նրանց գոյութիւնը պահպանելու (ուտելու, հազնիլու, բնակարանի) համար միայն այդշափէ է հար կաւոր: Վեց ժամ՝ աշխատանքից յետոյ բանւորներն ար գէն լրացնում են այդ իննսուն կօպէկի համապատասխան ժամանակը, իսկ օրվայ մնացած մասը աշխատում են ձը-րիաբար և այդպիսով օրվայ նոր արժէք ունեցող իննը-սուն կօպէկը գործարանատէրին տալիս են ձրի կերպով (եթէ համարենք, թէ բանւորն օրական աշխատում է ընդ ամենը տասն և երկու ժամ): Եւ եթէ կայ քսան բան-ւոր և բանում են նրանք, ոլցուք, երեք հարիւր երեսուն երեք օր տարվայ մէջ, այն ժամանակ գործարանատէրին տալիս են տարեկան վեց հազար բուրլ շահ: Ակներեւ է, որ աշխատաւորները որքան շատ տան իրենց աշխատան քից, այնքան էլ աւելի շահ կունենայ գործարանատէրը: այնպէս որ եթէ օրական վեց ժամ՝ աւելորդ աշխատան քի փոխանակ բանւորները տային ութ ժամ, այն ժամանակ գործարանատէրի շահը կը լինի ո՛չ թէ վեց հազար, այլ եօթ հազար ինն հարիւր բան բուրլ:

Ներկայումս հէնց այդպէս էլ է:

Բանւորները հալ կաղրված են տալ գործարանատէրին իրենց աշխատաւթեան օրվայ աւելի ու աւելի մեծ մասը: Բայց ինչպէ՞ս:

Ամենապարզ կերպով ինչո՞ւ համար է՝ մեր վերև բերած օրինակում աշխատաւորը օրական ստանում իննսուն կօպէկ: Որովհետեւ նրան լոկ այդշափէ է հարկաւոր իր գո-

յութիւնը պահպանելու համար (կերակրի, հագուստի, ընակարանի համար): Այդ վճարի համար օրական աշխատելով վեց ժամ, բանւորն օրվայ մնացած մասը (այս իրքն վեց ժամը) բանում է ձրիապէս:

Եթէ այնպէս պատահէր, որ բանւորի ուտել-խմելու և առհասարակ ապրուստի համար բաւական լինէր վեցի փրխարէն չորս ժամ՝ աշխատանք, այն ժամանակ աշխատանքի վճարը կը լինէր այլ ևս ո՛չ թէ իննսուն, այլ միայն վաթուուն կօպ: Աշխատաւորը կը բանէր իրեն համար լոկ չորս ժամ, իսկ ութ ժամը գործարանատէրի օդ տի համար, տալով նրան ամրող յաւելեալ աշխատանքը, ամբողջ յաւելեալ արժէքը:

Իրականութեան մէջ հէնց այդպէս էլ տեղի է ունենում: Ամեն տեղ սկսում են գործածել մեքենաներ, որոնց միջոցով կարելի է աւելի մեծ թւով արդիւնարերել առարկաները, և մեքենաների գործածութեան շատանալու շափով էլ աւելի ու աւելի քիչ ժամանակ է պահանջվում այն առարկաների պատրաստութեան համար, որոնց պէտք ունի աշխատաւորը: Առաջ մի շապիկն արժէք 2. 3 օր աշխատանք, իսկ այսօր միայն մէկ օր և աւելի քիչ առաջ մի ըրդէն գոտն արժէքը օրինակ՝ տասն օր աշխատանք, իսկ այսօր չարժէ մինչև անգամ երեք օր:

Հետեաբար, ներկայումս բանւորին չէ վիճակվում իրեն համար աշխատել (իր վարձը լրացնելու համար) այն բան ժամանակ, ինչպէս էր առաջ: Մի ժամանակ իրեն համար նա պէտք է աշխատէր վեց ժամ՝ այնտեղ որ տեղ այժմ՝ բաւական է և չորս ժամ: Առաջ իր օրական

տամն և երկու ժամ աշխատութիւնից իրեն համար բա  
նում էր վեց ժամ, իսկ մնացած վեց ժամը տալիս էր  
գործարանատէրին, այժմ նրա համար բաւական է և չորս  
ժամ, հետեւ պայէս գործարանատէրի համար մնում է ութ  
ժամ։ Բանւորն աշխատում է առաջվայ պէս, մինչդեռ օ  
գուտ է քաղում միայն գործարանատէրը։ Առաջ բանւորն  
աշխատում էր իրեն համար վեց ժամ, իսկ մնացած վեց  
ժամվայ աշխատութիւնը գործադրում էր յաւելեալ ար-  
ժէր ստեղծելու վրայ, այդ յաւելեալ արժէրի շափը  
(այսինքն չը վճարված և վճարված աշխատանքի ի-  
րար մէջ եղած յարարերութիւնը) հաւասար էր մէկի,  
կամ հարիւր տոկոսի. իսկ այժմ բանւորի համար  
անհրաժեշտ, պիտանի աշխատանքը ակում է չորս  
ժամ, յաւելեալ արժէրի ստեղծելը վերցնում է ութ ժամ  
և դրա չափը կը լինի երկու, կամ երկու հարիւր տոկոս։  
Ներկայում ամեն տեղ արդիւնաբերութեան բոլոր ճիւ-  
զերում սկսում են գործածել մերենաներ։ Դրանց հետ  
միասին աշխատութիւնն էլ աւելի է արագանում։ Այդ  
պատճառով էլ այն ժամանակը, որ անհրաժեշտ է բանւո-  
րին իր գոյութիւնը ստահանելու համար, շարունակ պա-  
կառում է, իսկ գործարանատէրի օգտի համար յատկաց  
ված ժամանակն աւելի ու աւելի մեծանում, ընդարձակ-  
վում է։ Եւ ուրեմն յաւելեալ արժէրի շափը նոյնպէս շա-  
րունակ աճում է։

Հիմա մինք տեսնում ենք, թէ ինչու աշխատաւորները  
պէտք է աղքատանան, իսկ գործարանատէրերը՝ հարստա-  
նան։

— Է՞՞, դրա մէջ ոչինչ միմիթարական չը կայ, կատէք

գուք ինձ։ Եթէ հարկ է, որ այդպէս լինի, այն ժամա-  
նակ էլ ինչ յոյս կարող ենք ունենալ թէ մեր զրութիւ-  
նը կը բարւոքվէ։

Զարիբն առանց բարիքի չէ, առում է առածը։ Այդ-  
պէս և յաւելեալ անժեքի շափի այս շարունակ բարձրա-  
նալու մէջ կամ շատ լաւութիւններ Ամենից առաջ գրա-  
լաւութիւնը նրանումն է, որ աշխատաւորը կարող է իրեն  
պահպանել աւելի և աւելի քիչ աշխատանք գործադրե-  
լով։ Այժմ, երբ զրեթէ ամբողջ աշխատանքը տրվում է  
տէրերին, աշխատաւորը դրանով շատ բան է կորցնում,  
բայց ժամանակով երբ այլ ևս տէրեր չեն լինիլ անհրա-  
ժեշտ աշխատանքի ժամանակի այդ պակասիլը բանւորի  
համար կունենայ մեծ կարեւորութիւն։

Բացի դրանից ևս այստեղ պէտք է յիշատակեմ մի  
բան ևս, որի մասին մինչեւ հիմա ոչինչ չեմ խօսել ինչ-  
պէս էք կարծում, արդեօք գործարանատէրերը ամենքն էլ  
հարստանում են ուրիշի աշխատանքով։ Ո՛չ ամենքը. ա-  
մենքը հարստանալ չեն կարող նրանցից իւրաքանչիւրն աշ-  
խատում է քանդել միւսի տունը։ Մէկն աշխատում է զա-  
ճառքի հանել որքան կարելի շատ ասլրանք, օրինակ՝ շիթ  
(բասմա, պասմա), միւսն ուղարկում է աւելի շատ, եր-  
րորդն ևս աւելի շատ, բան այդ երկուսը միասին և  
նրանցից իւրաքանչիւրը պէտք է վաճառէ որքան կա-  
րելի է աժան, եթէ չէ ուղում ասլրանքը մնայ ընկած։ Վեր  
շապէս շուկայում այնքան շատ չիթ է հաւաքում, որ զը  
նողներ այլ ևս չէ ունենում։ իսկ գործարանատէրն ա-  
ռանց գնողների շատ էլ հեռու չէ սնանկութիւնից։ Այսին

շատ հարուստները կարող են երկար ժամանակ սպասել նոր պահանջին և շարունակել արդիւնաբերութիւնը, իսկ աւելի քիչ հարուստները բոլորովին քայլայվում են և քայլայում են հազարաւոր աշխատաւորների, որ աշխատում էին նրանց մօտ, թողնելով նրանց կտոր հացի կարծու Եւ այդ բանը կրկնվում է իւրաքանչիւր ութ՝ տասը տարի իւրաքանչիւր ութ՝ տասը տարի ոչնչանում են բազմաթիւ մանր գործարանատէրեր, փողոցն են շլրտվում մեծաթիւ բանւորներ, և հարստանում են միայն մի քանի խոշոր գործարանատէրեր:

— Ուրեմն ի՞նչ կարելի է հետեցնել դրանից:

Շատ բան Գործարանատէրերի և հարուստների թիւն գնալով առհասարակ աւելի ու աւելի է պակասում, իսկ ազգաւոր բանւորների թիւն ընդհակառակն շարունակ աճում է. Հարստութիւնը շարունակ կուտակվում ու կենտրոնանում է սակաւաթիւ մարդկանց ձեռքը, մինչդեռ կարերը սկսում է տիրել բնակիչների աւելի ու աւելի մեծ քանակութեան վրայ:

Աշխատաւորները տեսնում են, որ գործարանատէրերի թիւը գնալով պակասում է, որ թէև նրանց հարստութիւնն աճում է, բայց իրենք քիչանում են, այնպէս որ այն բոլորը, ինչ գործարանատէրերը վաստակում են հարստութիւնից, կորցնում են ոյժի վերաբերութեամբ: Մինչդեռ բանւորները գործարաններում սովորում են միատեղ աշխատել սեփական աշքով տեսնում են, թէ որքան ձեռնտու է աշխատել ընդհանուր կերպով թէ որպէս այդպիսով վաստակվում է ժամանակը և արգիւնաբերած

առարկաներն ել աւելի կատարելագործված ոն լաւ են լինում Նրանք սեփական աշքով տեսնում են, թէ որքան վաստ է այն, որ աշխատանքի գործիքները պատկանում են մի սեփականատէրի, որը ոչ միայն չէ աշխատում ինքը, այլ յաճախ հասկացողութիւն էլ չունի, թէ ինչպիսի կերպով են չինվում առարկաներն իր գործարանում:

Բացի գրանից, գործարաններում բանւորները սովորում են իրար պաշտպանել. նրանք տեսնում են, որ իրենք ամենքն էլ ունին մէկ ընդհանուր թշնամի, որ ապրում է բանւորների աշխատանքով, և նրանք հասկանում են, որ այդ թշնամին յաղթելու համար անհրաժեշտ է մի մեանց հետ միանալ և օգնել իրար:

Ի հարկէ, շատ բանւորների գլխում ծագել է այսպիսի միտք. — յիրաւի որի՞ խաթրու է, որ մենք աշխատում ենք մի մարդու համար: Մինք թւով շատ ենք, իսկ նա — մէկ. մենք աշխատում ենք մեզ համար, իսկ նա խլում է մեզ նից մեր աշխատանքը, Եթէ գործարանները մերը լինէին, այն ժամանակ ամեն բան ուրիշ կերպ կերպթար. մենք ընկած չէինք լինի շահի ետելից, այլ միայն հոգս կը տանէ ինք մեր գոյութիւնը պահպանելու վրայ: Մինք կաշխատէինք օգուտ ըերել ամենքին, իսկ նա աշխատում է միմիայն իրեն համար՝ ի վեաս ամենքին: Ինչո՞ւ համար բոլոր աշխատաւորները խօսքը մէկ չանեն, ինչո՞ւ համար նրանք շառնեն գործարանատէրերից հողն ու գործարանները:

Գ.

Բայց արգեօք արդարացի<sup>0</sup> կը լինի դա:

Քիթը չէ քթախոտի համար, այլ քթախոտը քթի համար: Նրա համար չեն մարդիկ աշխարհում, որ արդիւնագործեն որքան կարելի է շատ արդիւնք, այլ արդիւնքներն են աշխարհում, որպէս զի բաւականութիւն տան մարդկանց պէտքերին: Աշխատաւորները ստեղծում են արդիւնքները, նրանք էլ պիտի օգտվեն գրանցով, իսկ զրա համար նրանց անհրաժեշտ է ունենալ աշխատանքի գործիքները, որ այժմ պատկանում են գործարանատէրերին: Իսկ եթէ ձեզ որ և է մէկն ասէ, թէ սեփականութիւնը սրբութիւն է, որին ձեռք տալ չէ կարելի, այն ժամանակ կարող էք պատասխանել կարճ ու պարզ կերպավ: Դուք ամրող դարեր ամեն օր և ամեն ժամ զողացել էք մեղնից, ծծել էք մեր քրտինքն ու արիւնը: Այժմ միայն յետ ենք վերցնում մերը: Գործարանները շինված են մեր ձեռներով, հողը մշակված է մեղնով ամեն բան, ինչ եղել է մեր ձեռքով, պէտք է պատկանէ մեզ: Զե՞նք ուղղում այլ ևս հարստացնել ու րիշներին մեր աշխատանքով:

Գ.

Այժմ մնում է վերջին՝ պահնակարենոր հարցը:  
Ի՞նչ կերպով առնել գործարաննեղն ու հողը, ի՞նչ պէս  
հասնել դրան:

— Դա արդէն ձեր գործն է: Դրա մասին պէտք է մը տածէք դուք ինքներդ: Երբ որ նախկին ժամանակներում խոսք էր լինում հայրենիքը ստրկութիւնից ազատելու մասին, երբ որ հարկ էր լինում դուրս քշել թշնամուն, այն ժամանակ զիմում էին ձեզ աշխատաւորներ, և այն ժամանակ դուք կարող էք հարցնել: — «Ազատնել հայրենիքը, դուրս քշել թշնամուն, մենք պատրաստ ենք, բայց ի՞նչ պէս անել այդ: »

Իսկ այժմ գործը վերաբերում է միայն ձեզ ձեր ընտանիքներին, ձեր եղբայրներին: Իսկ սեփական գործը պէտք է զիտենաք անել ինքներդ: Միայն թէ երբէք մի մոռանաբ, որ աշխատանքի գործիքներն ընդհանուրին պատկանած ժամանակը մի մանակը միայն մարդ գիտող են լինել բազգաւորութիւնը կարող են ազատագույնութեան» հեղինակի պէս հարիւրաւոր մարդիկ ասեն ձեզ: Թէ մի մարդ առանձնապէս կարող է ամեն բան ձեռք բերել ինքը, չը հաւասար նրանց:

Միայն միանալով միմեանց հետ, ընդհանուր ոյժերով աշխատաւորները կարող են ազատել իրենց:



2013

«Ազգային գրադարան



NL0040875



ՀԵՂԱԿԵՐՆ ԿՈՒՍԿՅՑՈՒԹԵՐՆ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՔԻՆՆԵՐ.

## ԲՈՉԻՆԻ զիբուլք

- 1) Ծարագիր Հնչակեան կուսակցութեան . . . 2րի.
  - 2) Նոր Հռամակը և բաց Նամակ Հայաստանցիներին. (բառպատճեած) . . . . . գ. 1 ֆրանկ.
  - 3) Տարեգարձ 1890 թ. Յուլիս Տասնեւհինդի: Յեղաշիխակեան հերթուներ: Յ. Զանկիւլիանի, Ա. Ա. Կալվանտեանի և Յ. Դամբուեանի պատկերներով. . գ. 30 սանտիմ.
  - 4) Յուլիս Տասնեւհինդի 1890 թ. արիւնաշեղ Յայըը կ. Պօլում և օրւան հերթուները — Փրանսերէն: Յ. Զանկիւլիանի, Յ. Դամբուեանի և Ա. Ա. Կալվանտեանի պատկերներով. . . . . գ. 30 նանտիմ.
  - 5) Ալինչով է ազգում հեղ Ս. Գիշեալ Հ. Խարգ մանութիւն. . . . . գ. 75 սանտիմ.

三

“Հետապնդություն մերակը է նաև չեղ. Ա Փախստականը”, պ օ է մա յիշափոխական կեանքից. գ. 40 սանտիմ:

三

Բրօշիւրների վճարն ընդունվումէ նաև նաև նաև կազմով: